

Zinfandel 2007 vintage

891.99

G-15

6 NOV 2013 97

ՅՈՎՀԱՆՆԵՍԻ. ՆԱԶԱՐԵԱՆ

# ԵՐԶԱԿԱԿՈՒԹԵԱՆ

## ԵՐԿԻՐԸ

— ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԲ —  
ԳԻՍԱԿՈՐԻՆ ԳԱԼՈՒՍՅԸ

ՔԱՐՈՅՑԿԱՆ ՏՐԱՄ

ԶՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾ

Եթեղ, Եկ ԱՀԱԽՈՐ ՊԱՏԿԵՐՆԵՐՈվ,

Տպագրիչ ՎԱՆԻՆԱԿ Ս. ԲԵՒՐԱՏ  
Կ. Պոլիս Օպերան Համար Խօս 672

STAR

1910

ՅՈՎՀԱՆՆԵՍԻ. ՆԱԶԱՐԵԱՆ

391.33

G-15

# ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆ

## ԵՐԿԻՐԸ

—ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՔ—  
ԳԻՍԱԿԻՈՐԻՆ ԳՈԼՈՒՄՑԸ



Տպագրիչ ՎԱՐԴԻՆԱԿ Ս. ԲԻՒՐԱՏ

Կ. Պուլս Սուլթան Համամ Մօլս Թաւ

1910

Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն

Երկրի վրայ գոյութիւն աւնեցող արարածներուն  
մէջ միայն մարդն է որ մնամանութեամբ իր բարձր  
կոչումը կ'արհամարհէ ու իր մարդկային բնական, աղ-  
նիւ ձգտումներուն և ընդունակութիւններուն տրամա-  
գծօրէն կը հակառակի՝ գերեկան համակերպող կենցաղ  
մը շինելով իրեն :

Այս, մարդն է միայն որ իբր մարդ չուզեր բարու-  
յական ու գաղափարական կեանք մը ունենալ գէթ  
մարդկային ընկերութեան ընկերական գործառնութիւն-  
ներուն գիտական և բանաւոր կազմակերպութիւն մը  
տալով : Պատճառը որոշ է : Որովհետեւ ա՛ն իբր կեն-  
դանի՞ բնազդի կը հետեւի և պատահական գիտուած-  
ներու կ'ենթարկուի ակամոյ, ամենափոքր գաղափար մը  
իսկ չունենալով իր թանձր տգիտութեան մասին :

Միւս կողմանէ՝ երկրագործութեան, արհեստի, ճար-  
տարարուեստի, վաճառականութեան և արուեստի մէջ  
ընդօրինակող և հետեւող գործունէնութեան մը տիրա-  
նալով՝ կ'ուզէ հաւատալ թէ իր անհատական և սոսկ  
նիւթական պէտքերը գոհացնելու պայմաններ ստեղծե-  
լով վայելքի և երջանկութեան կը հասնի :

Ահա այս եղբակացութիւնը իր մէջ իտէալի տեղ կը  
բռնէ և հետեւաբար զայն իրականացնելու միայն կը  
ձգտի, ու բոլորովին կը լքէ իր ներքին մարդը ան-  
պաշտպան և անզարդ, ու զայն կազմակերպելու տար-  
բական պահանջներն իսկ չգործադրեր : Այս իրականու-  
թեան պատճառով ա՛ն անկարող կ'ըլլայ բացարձակա-  
պէս իր նախապաշարումներէն և անպիտան համոզում-  
ներէն ազատագրուիլ, իր հոգեկան պահանջները փո-



10094-57

իւել, գիտակցութիւն ձեռք բերել ու իր վրայ ճնշող ճակատագիրը բարելաւել՝ ճշմարիտ սկզբունքներու, գաղափարներու և բարձր բարոյականի հետամուտ ըլլալով:

Յգիտութիւնը սակայն՝ որչափ որ բարեկարգող և հնարող, կազմակերպող և ստեղծող ձիրքերէ զուրկ է բայց և այսպէս զգայարանական, բարոյակոն տպաւութիւններու լաւատես ընդունակ է, և տեւաբար, կարելի է զայն ստեղծող և բարեկարգող հնարող և կազմակերպող յարմարութիւններով և ձգտումներով օժտել, միայն թէ երկար ժամանակ պէտք է զայն ներգործիչ դրութիւննը, որովհետեւ ան միւս բոլոր դրութիւններէն անհամեմատ աւելի ներդորդող հանգամանքներ կը պարունակէ, մանաւանդ թատերական ներկայացումը որ լիակատար գեղարուեսան է ընական և ընկերական թանձրացած երեւոյթներով բաղադրուած որ գլխաւոր զգայարանքներուն այսինքն աչքին և ականջին միջոցաւ ուղեցին կարեւոր կեդրոններուն վրայ խոր ակօսներ կը բանայ և զարգացնող հետքեր կը ձգէ:

Գեղարուեսատը— բայց գաղափարական և բարոյական գեղարուեսատը— ոչ թէ միայն զեղեցկագիտական ճաշակը կը նրբացնէ և կ'ազնուացնէ, այլ և կը զարդացնէ և կը կազմակերպէ ներքին եսը, անոր տալով ընական և ընկերական լուրջ ճանաչողութիւն, ընտրութիւն և մանաւանդ ձեռներեցութիւն և գործունէւթիւն:

Հոգեբանական այսպիսի շարժառիթներէ դրդուած միայն կը հրատարակնենք ներկայ բարոյական և գաղափարական տուամը որ կը պատկերացնէ երկրի իսկական

գիճակը ուր կը գործէ սանձարձակ Տգիտութիւնը իր երեք արբանեակներով— դրամապատճենութիւն, կնամոլութիւն և փառատութիւն, —իսկ գաղափարական ազատական ներ բոլորովին անհնոտէր և ծառայող ժողովրդեան դատին, Մջապատուած բռնութեան այլազան նենգութիւններէն, հազար ու մէկ դժուարութիւններու յաղթելով՝ ժողովուրդը կը կրթեն գաղափարական տեսակէտներով և կը կազմակերպեն զայն, որ կը յաջողի քանզել տգիտութեան տիրապետութիւնը որ երկրի թշուառութեան միակ պատճառն է: Եւ արդարեւ այն ատեն մարդիկ եղջանիկ պիտի ըլլան՝ երբ կատարեալ իմաստութեան և գիտութեան հասնին:

3. ՆԱԶԱՐԵԱՆ

## ԱՆՁԵՐ

Հրանդ կոմս Ամատունի . — Արմատական ազատական .

Վահան . — Հրանդի բարեկամը .

Աշոտ . — Ժողովրդական փոփիականտիսթ .

Տիրան . — Փոփիականտիսթ և կազմակերպով .

Մարտիկ . — Սպասաւոր Հրանդի .

Աստղիկ . — Ազնուական օրիորդ , սիրահար և ոսոխ Հրանդի .

Զապէլ . — Աստղիկի նամիշտը .

Վասակ . — Ոստիկանապետ բռնութեան .

Սուրէն . — Հարցաքննիչ դատաւոր .

Տգիտութեան ոգի .

Դրամապաշտութեան ոգի .

Կնամոլութեան ոգի .

Իմաստութեան ոգի . Յաւերժանարսեր .

Պողոս . — Աղքատ երկրագործ .

Յակոբ . — " "

Դրիգոր . — Աղքատ մուճակագործ .

Զօրականներ , իշխաններ , կղերներ , դրամատէրներ , փառամոլներ , կնամոլներ , աղքատներ , տղէտներ .



## ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ԵՐԿԻՐԸ

Խմասութեան յաղբանակը — Գիսաւորին գալուսր .

### ԱՐԱՐՈՒԿԱԾ Ա.

Վերլուծում . — Ծախուած երկիրը , բռնապետութեան դէմ կազմակերպութիւն՝ գաղափարապաշտ խումբերու և միութիւն , զրկուածներու տեսարան , ընդհանուր շարժում :

### ՏԵՍԻԼ Ա.

Տեսարանը կը ներկայացնէ աշխատանոց մը ուր կան գիտական զործիներ , գիրեր , հարշաներ , երկրագունք , սեղան արուներ եւ այլն :

Հրանդ . — (Առանձին , զլուխը ձեռքերուն միշ , յուզուած եւ մասպասդ : Վարագորը բացուելէ վերջ պահ մը լրութիւն եւ յետոյ հառաջելավ )

Ի՞ն . . . երկիրը ծախուած է , սեփականութիւն դարձած է զնողներուն . . . : Այո՛ , ամբողջովին ծախուած է . . . հոգը ծախուած , ջուրը ծախուած , օղը , արեւը ծախուած , հոսանքները , զօրութիւնները ծախուած . . . :

Շարժում , ոյ յժ , աշխատութիւն ծախուած , գիւտերը , արուեստները , հանձնարը , տաղանդը ծախուած . . . :

Երկրի վրայ տմբողջ բնութիւնը աճուրդի հանած

և մարդիկ . . . : Մարդկութեան իտէալը ծախելու և գը-  
կելու հրէշային իտէալ մը եղած է . . . ան , երբեք կա-  
ելի չէ երեւակայել նկարագրի այսքան ինկածու-  
ւն . . . :

Ո՞վ մա՛րդ , զգա՛ դուն , զգա՛ թէ ձեռքե՛րդ ու  
կան ստքե՛րդ ծախուած են , ջիղե՛րդ ու գործունէութիւնդ  
ծախուած են , անդամնե՛րդ ու զգայարանքնե՛րդ ծախ-  
ուած են . . . զարհուլիօրէն զգա՛ թէ մի՛տքդ ու իմացա-  
կանութիւնդ ծախուած են . . . յղացումնե՛րդ , սկրզ-  
բունքնե՛րդ , գաղափարներդ ու խոկումներդ ծախուած  
են . . . գատողութիւնդ , գիտակցութիւնդ , կամքդ և  
ընտրողութիւնդ ամէնքն ալ ծախուած են . . . Որո՞ւ  
կը պատկանիս դուն — տնոր՝ որ քեզ կրցած է գնել . . .  
անոր՝ որ քեզ ծախու առած է , քու մարդկութիւնդ  
ծախու առած . . . : Ո՞չ , բնա՛ւ երբեք , դուն քեզի չես  
պատկանիր ու չպիտի պատկանիս , անա ա՛յսքան անա-  
ւորօրէն դաւադրած են քու մարդկային ազատութեանդ  
ու մնծութեանդ . . . Եւ դո՞ւն որ ճակատագրուած էր  
գիւցազն մ՛ըլլալու , յաղթական ու փառապանծ յա-  
ռաջդիմութեան ձիւնաթոյր նժոյդին վրայ նստած՝ եր-  
ջանկութեան աւետարեր պատգամաւորի դերը կատա-  
րելու , բնութեան մեծագորդ ուժերուն և պակուցիչ  
զօրութիւններուն արդիւնագործումին միակ վարիչը ըլ-  
լալու , որ գիտական հրաշալիքներ պիտի արտադրէիր  
ու հսկայ գլուխ գործոցներով երկիրը պիտի զարդա-  
րէիր , ներկելով զայն սխրալի և հնշտալի զոյներու ներ-  
դաշնակութիւնովը՝ և քու հսկայական գործերդ իրեւ-  
խրոխտ թանգարանի մը ամբարտակը , իրեւ թանկա-  
գին գո՞ւար մը պիտի ցցուէին բնութեան կուրծ քին վրայ  
ու աստղերը անոնց վրայ պիտի նախանձէին և յաւեր-  
ժականները այդ հեղինակութիւններունդ՝ վրայ պիտի  
հիանացին . . . :

Օ՞հ , այս ո՛քան փոփոխութիւն և ո՛քան անա-  
ւոր անկո՞ւմ . . . հիմա ի՞նչ ես , — ծախուած , մը լոկ՝

ստրկացած գերի՛ մը . . . ոչ բնութիւնը և ոչ մարդը ո՛չինչ  
ունին քու մէջդ , . . . շահամոլ վագրերու յաղթանակին  
աւա՛րը , կը խնամուէիս , կը գիրանա՛ս , ընչաքաղցներու  
անժուժկալ և վատչուէր ստամոքը կշտացնելու հա-  
մար . . . երեւակայի՛ որ որսի թռչունէ մը , որսի երէէ  
մը աւելի չես արցեր . . . Այն կեանքը որ քեզի չպատ-  
կանիր լիովին՝ կեանք չէ՛ ան , այն ա՛չքը որով գուն  
չես աեսներ՝ աչք չէ՛ ան , այն կարողութիւնները որսնց  
դուն տէրը և իշխանը չես՝ քեզի չեն վերաբերիր , քուկդ  
չեն անոնք . . . : Ըսկերական գործունէութիւնդ կաշ-  
կանդուած , անհատական ազատութիւնդ չղթայակապ ,  
բնութեան ամենամեծ պարզեւէն , ազատութիւնէն զըր-  
կուած , գնա՛ սողա՛ երկրի վրայ իրեւե անհեթեթ վի-  
շտապ մը , անձոռնութիւններու մարմնացում . ու թող  
բնութիւնը գժուխային քրքիչներ արձակէ՛ իր բոնա-  
պետութեան բագինին առջեւ մորթերով վիժուկներդ  
անխնայ և անոնց արիւնը սրսկելով այս անիծեա՛լ ու  
ծախուած հողին վրայ՝ իր անթիւ ոճիրներուն սրբա-  
գործումին համար . . . :

Օր մը , այդ վիշտապ մարմինէդ հիդրայ մը պիտի  
ծնի որ պիտի ըլլայ հսկայ , լեռներու երկար շղթանե-  
րուն չափ հսկայ , պրազիլիբական անտառներուն չափ  
հսկայ , որ ամէն վայրկեանի մէջ պիտի աճի՛ , պիտի  
մեծնայ , պիտի զարդանայ ու պիտի փաթթուի ամբողջ  
երկրագունակին վրայ : Անոր ամէն կողմերէն գլուխներ  
պիտի ցցուին ու այդ գլուխները զինուած պիտի ըլլան  
եղջիւրներով , ժանիքներով , վրիժակներով ու պատիճ-  
ներով անոր ամէն կողմերէն հիդրայական բազուկներ  
պիտի երկարին վամբիրի ծծոլ բերաններով , ճիրաննե-  
րով և մազիլներով զինուած :

Անա այս անուելի հիգրան պիտի պատուէ երկիրը՝ և  
անոր հիւթերն ու զօրութիւնները , սնունդն ու արտա-  
գրութիւնները պիտի լափէ :  
Բուսականութիւնը ամբողջ պիտի չորնայ ու մոխիր

պիտի դառնայ, բովանդակ կենդանականութիւնը անոր համագամները պիտի կազմէ, ոչ մէկ նիւթ, ոչ մէկ հանք չպիտի վերապրի և երկրագունաը քանի մը վայրկեանի մէջ պիտի փոխադրուի հիդրային որովայնը, որ իր ճիւաղային կատաղութիւնը կատարելապէս չկրնալ յագեցնելով պիտի ոռնայ պիտի ոռնայ որոստագին, ու իր միլիոնաւոր բերաններէն ու կոկորդներէն դուրս պիտի ժայթքեն թրթռուն, գոռացող և թունաւոր կազեր, ու հզօր սատում մը պիտի ընէ և պիտի յարձակի արեւին վրայ զայն ալ լափելու համար ու պիտի այրի հոն, և ես գո՞ւմ հիմա որովհետեւ հիդրայով երկերը՝ այսինքն բըռնութիւնը պիտի կործանի իսկ արեւով ու կրակով ալ հիդրան պիտի ածիւնանայ:

Ծախուած երկրին ապագան այս է, ծախուած մարդկութեան, ծախուած ազատութեան ապագան այս պիտի ըլլայ...: (Դուռը կը զարնուի)

### ՏԵՍԻԼ Բ.

### ՀՐԱՆԴ ԵՒ ՄԱՐՑԻԿ

Հրանդ.— Մաէք:

Մարտիկ.— Տէր իմ, Պ. Վահան Ակած է և ձեզ հետ աեսնուիր կ'ուղէ:

Հրանդ.— Թող հրամմէ: (Սպասուոր կը մեկնի) Տագնապալի կացութեար մէջ բարեկամի մը գալուստը լաւ նշան է: (Վահան ներս կը մտնէ, Հրանդ անոր ձեռքը սեղմելով.)

### ՏԵՍԻԼ Գ.

### ՀՐԱՆԴ ԵՒ ՎԱՀԱՆ

Հրանդ.— Սիրելիս, խիստ պատեհ առիթի մէջ եւ կար, այս պահուս անկեղծ բարեկամի մը շատ պէտք ունէի, ծայրայեղօրէն յուզուած էի, մարմինս զգացումներուս նեղ կուգար, առանձնութիւնը և լուսութիւնը շահագործեցի և դուրս թափեցի անխնայ այս բոլոր հրատապ խորհուրդներս որոնց համար յիմար մարդկութեան նախատինքին նշաւակ կ'ըլլամ: Ծախուած երկրին՝ ծալիուած զաւակներէն մէկն ալ ես եմ, կ'ուզեմ կործանել շղթայի և բանտի տիրապետութիւնը, կ'ուզեմ այրել հիւանդանոցներու և յիմարանոցներու վերածուած քաղաքները, բայց... անկարող եմ:

Վահան.— Յանուութեան ոճիրներուն և զրկանքներուն համակերպող ու սիրայօժար հանդուրժող ազգերու մէջ կ'ապրինք որոնց համար ազատականներու և գաղափարականներու գոյութիւնը անտանելի է, ինչպէս խաւարին համար անտանելի է լոյսին գոյութիւնը: Քանի որ մեր տեսակէտներէն չենք շեղիր ու չպիտի շեղինք, մեր կեանքի բոլոր վայրկեանները տենդոտ պիտի ըլլան, վասն զի ոչ թէ իրական վատերու դէմ է միրայն որ պիտի կուուինք այլ և երեւակայելի վատութիւններու, այսինքն յիմար խորհուրդներու և նախապաշարումներու դէմ: Վասահ եմ սակայն որ եթէ մենք չիրնանք յաղթել, հարկաւ որ մը մեր գաղափարները պիտի յաղթանակեն և պիտի գրաւեն բոլոր աշխարհը: Կամ պէտք է որ կործանի երկերը և կամ պէտք է որ գաղափարները անպայման տիրապետեն:

Հրանդ.— Այս յեղափոխութիւնը չնմանիր սոսկական յեղափոխութիւններու, մենք բռնաւորներու դէմ պիտի կուուինք, չենք իսկ վիշտնիր կուուելու այլ ըլլու-

Կարդա՛ պատմութիւնը, շրջէ՛ երկրագնդին երե-  
ար, և պիտի տեսնես որ ամէն լեռ իր բռնաւորին պատ-  
մութիւնը ունի, ամէն ծով իր հրէշին պատմութիւնը  
ունի, երկրագունալը ողողուեր է մարդու արիւնով,  
արիւնի լիճեր ձեւացեր են ամէն կողմ և այս ոչ թէ  
ազատութեան և արգարութեան համար այլ սոսկ բըռ-  
նութեան ժանիքները իւրացնելու համար :

Հրանտ.— Մեր միջոցնե՞րը կ'ըսես, անոնք ալ կար-  
ծածիդ պէս անզօր և անբաւական չեն։ Մեր առաջին  
զէնքն է իմաստութիւնը որ անինայ կը կարէ, կը ջար-  
դէ, կը փշրէ։ Իմաստութեան ողին երրեք պարտու-  
թիւն չէ կրած երկրի վրայ իր մզած բոլոր մասնակի  
կոփւներուն մէջ ու սէգ դիւցազնի մը պէս յազմահա-  
քած է իր հակառակորդները։ Մեր միջոցներէն է զի-  
առութիւնը որ պատրաստած է արդէն իր զոանները, մե-  
քենանները, իր բզկառը և սպաննող զէնքերը, որ իր  
հրաբխային երախը բանալով կրակ ու բաց պիտի ժայթ-  
քէ բռնութեան ճիւաղին վրայ։ Մեր միջոցներէն է  
արուեստը որ արդէն իր յաղթանակի կոթողները կեր-  
տելու սկսած է։ Մնր միջոցներէն է վերջապէս աշխա-  
տութիւնը որ բռնութեան հսկայ ժայռը անդադար խոր-  
տակելու, փշրելու վրայ է։

Այս այս միջոցներով պիտի յարձակինք բռնու-  
թեան վրայ, երկրի զրկուածներուն հետ դաշնակցած և  
համախօսութեան ապստամբութեան զրօշակը պիտի պար-  
զենք, և այդ եօթնաթոյր զրօշակը նուիրուած պիտի  
ըլլայ ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան,  
արդարութեան, ծմբարտութեան, յառաջդիմութեան և  
երջանկութեան . . .

Այդ դրօշակը չպիտի իյնայ իր ծածանած բարձուն-  
քէն որով կտես զայն պիտի կրեն գաղափարուշան ան-  
պարտելի ախոյեաններ։ բարձունքէ բարձունք պիտի  
խոյանայ ան և իր հովանին տակ պիտի ամփոփէ երկրի  
ըոլոր զրկուած, ձնչուած, ըմբուած և երիտասարդ ու

նութեան դէմ, այս անմարմին ոգիին դէմ որ համար-  
ձակած է խեղաթիւրել բռնութեան կարգերը, մարել հան-  
ձարի եռանդը, սանձաւարել, զսպել վսևմ ձգառումները,  
նախնձիրի ընդարձակ կրկէսը դարձնել երկրագունաը,  
սով ու սրածութիւն զուգանեռաբար տարածելով՝ սար-  
սափի և սոսկումի մթնոլորտը ստեղծել։ Դաժան է տե-  
սիլ բռնութեան, գարշելի՛ ու նողկալի է անոր երե-  
ւոյթը որ տգեղութիւն, անձաշակութիւն և վայրագու-  
թիւն կը բուրէ, որ թունաւոր է, ման կը սփոէ, մեռ-  
եալնրուն քով կենդանիներուն գ' բեզմանները կը փո-  
րէ, մահաբոյր հեւոքով մը կը սուրայ հողերու մակե-  
րեսէն, ծովերու իրաններէն։ Թող ալ իյնա՛ ոչ թէ բըռ-  
նաւորը որ չատ է թուով՝ այլ բռնութիւնը որ մէկ է և  
սակայն իր արտայայտումները անհուն են։

Վահան.— Մեր միջոցները դեռ անբաւական են-  
այդ հրէշը ատպալելու, մենք տակաւին չունինք մեզի  
այս պիտանի ուժերը և զօրութիւնները որոնք օժան-  
դակութիւն պիտի մատակարարեն մեր այս խիզախ ար-  
շաւանքին համար՝ յաջողութեան դափնին նուիրերով  
մեզի և դժբաղդաբար մեր խորհուրդները խորհրդական  
պատեաններէն գուրս չպիտի կրնան մագլիցիլ ու մեր  
գանկերը պիտի նմանին այս պաշարուած բերդերուն  
որոնք եթէ անձնատուր չըլլան՝ անսուազ պիտի կոր-  
սուին։ Դուն շատ լաւատես ես բարեկամ, մենք ի՞նչ-  
պէս պիտի կրնանք մարտնչիլ այդ վիթխարի տիտանին  
դէմ որուն խորխա հրամանները դարերէ ի վեր գոր-  
ծադրեր է բովանդակ մարդկութիւնը՝ առանց ընդվե-  
զումի, առանց լայն ըմբոստացումի։

Բռնութեան դէմ բռնաւորները միայն ըմբոստացեր-  
են, բռնութեան դէմ բռնակալները միայն պատերազ-  
մեր են և դիտէք թէ ինչու համար, — անոր գաւը և  
մենաշնորհները յափշտակելու համար։ իսկ ազատու-  
թիւնը իր զմայլելի կերպարանքը ցոյց չէ տուեր բնաւ-  
երկրի վրայ։

ժերը, ան իրեն օգնութեան պիտի կանչէ երկրի թշուառներն ու տառապողները, երկնքի աստղերը, գիսաւորները և Հրատի բնակիչները, ու բանութեան երկիրը կործանելով ազատութեան երջանիկ երկիրը պիտի հիմնէ, հիմա կը հաւատա՞ս թէ յաղթութիւնը ապահով է և մեր ուժերը ձեռնոտու են:

Վահան.— Այո, կը հաւատամ թէ յափշտակուած ես և այդ ամէնը զոր կը պարզես՝ սոսկ խորհրդանշաններ են, հոմերական տեսնդ մը կայ բոլոր բացատրութիւններուդ մէջ, սեմական յափշտակութիւն մը բոլոր դատողութիւններուդ մէջ:

Երբ մարդիկ երկրի վրայ իրենց իրաւունքները պաշտպանելու անգօր են, հոգիններն ու երկնային զօրութիւնները ալ աւելի անզօր, խուլ և անտարբեր պիտի մնան: Նպատակի համար մեռնող ափ մը քաջեր միայն առանձնացած պիտի տեսնես բռնաւորին ահաւոր բանակներուն դէմ: Եթէ երազները իրադանալու եղանակ մը ունենային, այն ատեն իրականութիւններն ալ երազացած պիտի բլլային. քրմական և մարդարէական ջղացնցումներ են ատոնք, գաղափարապաշտ գիշովութիւնը որ շարունակ երջանկութեան նեկտարէն ըմպել կը կարծէ և ամէն անգամ որ եր շրթունքը կը մօտեցնէ սկաւառակին, մէջի նեկտարը կը ցնդի, գաւաթը կ'աներեւութանայ և պատրանքը կը մնայ միայն հնկեր, ճակատագրի բրտութիւնը երեւակայութեամբ չէ որ պիտի փափկանայ, անոր էութիւնը փոխել պէտք է շատ աւելի իրական և ատրբեր դեղերով:

Հրանդ.— Մարդիկ նպատակներու և սկզբունքներու բարժարական գործիքներ եղեր են միշտ երկրի վրայ, զանոնք հրահանգողը, զանոնք թելադրողը, զանոնք կատաղի պատերազմներու մէջ քաջալերողը և մղողը իտէլի չքնաղ դիցունին է եղեր, արեւէն շատ աւելի փայլուն, արեւէն շատ աւելի լուսաւոր, գաղափարի պոպղուն յաւերժաւարսը, գոհարներու այլազան խառ-

նուրդով պսակը գլխուն վրայ, վայելքի ու երջանկութեան ժպիտը ճառագայթած իր դէմքին վրայ, աղատութեան ու արդարութեան շարժումները ծփծուն ու ծածան իր բազուկներուն վրայ, ան միշտ հրաւեր է կարդացեր չարչարութած ու ճնշուած մարդկութեան և հրեղէն ոգիներ ներշնչեր է ընտրեալներու և անձնուէրներու: Ան՝ ամենազօր է, ան՝ հրապարներու թովչութիւնն է, ան՝ անդիմադրելի ծգողութիւնն է որ կը տապալէ, կզգետնէ և կը կործանէ բռնութեան բոլոր ամբարտակները, զնտանները, բանտերն ու բերդերը:

Պիտի տեսնես դու, ջրվէժը իր վազքին մէջն է, անոր վիթխարի թափը պիտի խորտակէ խարակն ու խութը և իր ոլորտապոյտ, զարհութեղի յարձանքներուն մէջ պիտի սեղմէ, պիտի պրկէ, պիտի ճմէ և առյաւէտ պիտի խողդէ բռնութեան մարդադագանը, և անոր ճիշրաններն ու ժանիքները պիտի հալին, պիտի հեղուկանան...: (Դուռը կը բացուի Աօնս ներս կը մտնի:)

### ՏԵՍԻԼԻ Դ:

### ՆՈՅՆՔ ԵՒ ԱՇԽՏ

Աշոտ.— Կատարեալ համերաշխութիւն կազմուած է չարի և վատութեան ներկայացուցիչներու միջիւ, քըրմականութիւնը, գրամալաշտութիւնը և պաշտօնակալութիւնը գաշնակցած են իրարու հետ՝ իրենց նշանաբան ունենալով տպիտութիւնը: (Հրանդի գալուալով) Դուն գաղափարական ես, Վահան աղատական, իսկ ես ժողովրդական: Այս ժողովուրդը, այս մարդկութիւնը գաղափարելը շատ դժուարին է, փոփականափաթներու զեռ շատ աւելի պէտք ունինք: Դրամին չըրածը յաձախ սուրը կ'ընէ, սուրին չըրածը՝ գրիչը, իսկ գրչին

չըրածը լեզուն կ'ընէ, լեզուն ամենակարող է, բայց  
տաժանելի և յարատել աշխատութիւն պէտք է:

Վահան.— Կը հաւատամ թէ փոօփականար մեծ  
յաջողութիւններ կրնայ ունենալ այն ժամանակ երբ  
մասսամբ պատրաստուած են շրջանակները և քիչ թէ  
շատ զարգացած դլուխներ ունին: Բայց մեր ամբոխ-  
ները տեղի չեն տար բնաւ գողափարուելու, անոնց  
հարկաւոր է խնամուա դաստիարակութիւն մը ապա թէ  
ոչ զուր են ձեր ջանքերը:

Աշոտ.— Հալածուած ժողովուրդը կարելի է գա-  
ղափարել իր վիշտերուն զգայուն ընկելով: Տառապանքը  
ըմբռստ է, և իր իրաւունքները պաշտպանելու բոլոր  
զէնքերը ունի:

Հրանդ.— Վահան, դուք ազատականներդ բոնա-  
ւորներէն և պահպանողականներէն աւելի միտսակար  
եղած էք անուղղակի կերպով, դժբաղդաբար սակայն  
այնպէս կը կարծէք թէ ձեր դանդաղ մնթօններով պի-  
տի կրնաք աշխարհը բարեկարգել. դուք աւելի միջոց-  
ներով կ'զբաղիք քան թէ նպատակով, վտանգաւոր է  
ձեր այդ մեթոտը:

Վահան.— Շուտով կը մուցուին այսպէս աղատա-  
կաններու մարդկութեան ըրած բարիքները: Մեր գործը  
շատ ընդարձակ եղած է ու շատ կանուխ ժամանակներէ  
ի վեր ընկերութեան յեղաշրջումին աշխատած ենք:  
Այն ատեն երբ աշխարհ գեռ միավետական բոնութեան  
տակ կը հածէր, մեր աղատական նախանայիքները խսրուե-  
ցան, զէնք առին, պաշարեցին բանաւորները և զա-  
նոնք ստիպեցին որ ժողովրդապետութիւնը ընդունին  
և սահմանադրական ու յառաջդիմական կարգեր հառ-  
տատեն: Աղատականներու շնորհւ է որ երկիրը այս-  
քան քաղաքակրթուած և յաւաղլիմած է:

Աշոտ.— Էնդհակառակը երկիրը յետաղիմած է,  
օրինական կարգերը սոսկ խաբէութիւններ են, դաւա-  
դրական նենգամիտ միջոցներ՝ ալ աւելի չարիք գոր-

ծելու համար: Յետադիմական կարգերու անունը յա-  
ռաջդիմական յորջորջելը մարդկային աղատութիւնը  
ոսկիէ շղթաներով կապել է, թող երկաթ շղթաներով  
կապուած ըլլար, որովհետեւ օր մը երկաթը պիտի ժան-  
գոտէր ու փշուէր և յառաջդիմութիւնը ազատ պիտի  
ըլլար, բայց ոսկին չպիտի ժանգոտի, չպիտի փշուի և  
յառաջդիմութիւնը կապուած պիտի ըլլայ շարունակ...:

Հրանդ.— Բոնաւորները միշտ բռնապետելու մըզ-  
ձաւանջը պիտի ունենան, տիրապետողներն ալ տիրա-  
պետելու, անոնց ձեռքը ազատագրական ծրագիրներ  
տալով աւելի ճարտար և յաջողելու ազահով միջոցներ  
տուած պիտի ըլլանք իրենց եսապաշտ նպատակը իրա-  
գործելու համար: Ճշմարիտ աշխարհավարական սկըզ-  
բունքները տիրապետելու և կառավարելու դիմակներ  
չեն հագնիր, այլ կը մնան առաջնորդողի և ծառայողի  
արտայայտիչ դէմքերով: (Դուռը կը բացուի եւ Տիրան  
գունարափ եերս կը մննէ:)

### ՏԵՍԻԼԻ.

### ՆՈՅՆՔ ԵՒ ՏԻՐԱՆ

Տիրան.— Էնկերներ, բարբարոսները ամէն կողմէ  
խուժած և քաղաքին շուրջը հաւաքուած են, բռնու-  
թեան ստրուկները կատաղաբար պիտի փհացնեն քա-  
ղաքը և ապա երկիրը, վերջին ճգնաժամի մէջ ենք,  
աճապարենք, առիթը յաւարագոյն է մեր ուժերը հա-  
ւաքելով գրո՞: առնք թշնամիին վրայ

Աշոտ.— Անհոգ եղիր, արդէն ամէն բան պատ-  
րաստուած է, այս պատերազմը յառաջդիմութեան եւ  
յետադիմութիւն պատերազմն է, լոյսի եւ իրաւորի



պատերազմը : Ես վատահ եմ որ պիտի յաղթենք եւ պիտի կործանենք բռնութեան գահը եւ անոր տեղը պիտի բարձրացնենք արդարութեան եւ իրաւունքի պալատը :

Տիրան .— Հասարակութիւնը և ժողովուրդին բազմութիւնը որչափ որ ալ հածակիր է ճշմարտութեան դասին, բայց և այնպէս պէտք եղած չափով պատրաստուած չէ . ծանծալօրէն գաղափարուիլը բաւական չէ այլ պէտք է կանոնաւորապէս կազմակերպուիլ : Դուք կ'ըսէք թէ ամէն բան պատրաստ է, սակայն աւազ, իրականութեան մէջ ոչինչ կայ պատրաստ :

Աշոտ .— Մտքերը պատրաստուած են աստիճան մը, ազատութեան գաղափարը արձագանգ գտած է ամէն կողմ և ըմբոսացած ամբոխներ իրենց արդար իրւունքը պաշտպանելու վիճակին մէջ փախադրուած են արդէն, թեթեւ կազմակերպութիւն մը և կորովի առաջնորդութիւն մը՝ և ահա խումբ խումբ մնզի պիտի հետեւին ամենքն ալ :

Վահան .— Եյոհեմութիւնը և հեռատեսութիւնը պէտք է որ յառաջդիմականներուն ուղեցոյցները ըլլան, հարկ է ուրեմն որ խոհեմութիւնով և հեռատեսութիւնով վարուինք՝ կարելի եղածին չափ և լրջօրէն կազմակերպենք ազատութեան խումբերը և այնուհետեւ իրաւամբ պարծենանք : Գաղափարի մակերեսային փոսիփականատը առանձինն անզօր է, մեզի համար հիմնական կազմակերպութիւն և արմատական պատրաստութիւն պէտք է :

Տիրան .— Ու մենք ժամանակ պիտի չունենանք պէտք եղածին պէս կազմակերպուելու : Ի՞նչ, միթէ դիւրի՞ն բան է սոված մարդկութիւնը, տառապող խուժանը կարգի կանոնի բերել, միութեան և իրաւունքի պահանջման դրօշակին տակ հաւաքել և յառաջ վարել զանոնք կոռուի գաշտին մէջ անել բանաւորներէն յաղթանակներ յափշտակելու համար . . . :

Աշոտ .— Եւ սակայն քաջութեան և կռուի ամենամիծ ազատութիւնը տառապանքի սաստկութիւնն

է : Թշուառութիւնը արդէն կազմակերպած է ժողովուրդը, զրկանքները արդէն ստեղծուած են անոր մէջ վըրէմնդրութեան ոգին՝ որ կռուիլ ու մեռնիլ գիտէ ու բնաւ ընկրկիլ :

Հրանդ .— Զարհուրելի ճգնաժամը հրաշագործ է . ան՝ առիծներու կը փոխակերպէտ տկարներն ու հիւանդները, անօթիներն ու վատասափակերն ալ՝ վագրերու . մանաւանդ որ վատասարտութիւնը աւելի մտային ախտ է քան մարմնական : Երբ սիրաը քաջ է տոկալու՝ եւ միտքը ուժեղ տրամաբանելու մէջ, ահա այն ատեն մարդ անհատը կազմակերպուած է և երբ հրաւեր մը շրջի ազատութեան անունով, անոնք ամէնքն ալ անմիշապէս կը խմբուին և իրենց ուժերը կը գործածեն նըւպատակի հասնելու համար :

Վահան .— Աւելիին և շա՛տ աւելիին պէտք է՝ աւելիին ու շա՛տ աւելիին հասնելու համար : Դանդաղելու և վարանելու ժամանակ չէ իրերու այս վիճակին մէջ որքան վայրկեաններ կորսնցնենք այնքան յաջողութիւններ կրնանք կորսնցուցած ըլլալ : Գործնական հարցերը տեսականին մարմնացումն ըլլալով հանդերձ՝ աւեսական եւ ո՛չ մէկ կերպարանք կը կրեն, այլ իրագործելի դառնալով կը հագնին իրականութեան դգեստը, սրով ածապարել պէտք է քանի որ ժամանակը անցած է : (Դուռը կը զարնուի :)

Հրանդ .— Մտէ՛ք : (Մարտիկ ներս կը մտնի : )

ՏԵՍԻԼ Զ.

ՆԱՅՆՔ ԵՒ ՄԱՐՏԻԿ

Մարտիկ .— Տէր իմ, երեք անձեր կան դուրսը, սրոնք հալածուած ըլլալով ստիկաններէ հոս մնու պարտէզը ապաւինած են, և կը փափաքին ձեզ տեսնել,

և համեստօրէն կ'աղերսեն որ բարեհաճութիւնը ունենաք  
զանոնք վայրկեան մը ունկնդրելու :

Հրանդ .— (Ընկերներուն դառնալով) կ'ուզէք որ  
կանչէ :

Ամէնքը .— Այս՝ թող գան, թող գան :

Հրանդ .— Գնա՛ մեր այդ դժբաղդները և թող քիչ  
մը սփոփանք դանեն, (Մարտիկ կը մեկնի : )

ՏԵՍԻԼ. Ե.

### ՆՈՅՆՔ

Տիրան .— Անհանդուրժելի է հալածանքի այս չափն  
ու եղանակը, խեղճ մարդիկ, որքան դժբաղդ ըլլալու  
են, և տեսնենք թէ ի՞նչ ըրած են... և միթէ ի՞նչ  
կրնան ընել. անօթի՛, մերկ, ընկնուած մարդը կրնա՞յ  
միթէ միասել ուրիշին: Վնասուած ու հալածուած հէ թ  
թշուառներ...:

Աշոտ .— Ո՛վ մարդկային անխղճութիւն, նողկալի  
փտախտը մարգկային բարոյական արժանապատռու-  
թեան, և զայն կը պարսաւեմ հոգիիս արհամարհան-  
քին բոլոր թափովը:

Տիրան .— Հա՛րկ է որ վերջ մը տրուի անմնդ ժո-  
ղովուրդը հալածելու և անդադար կողոպտելու դժո-  
խային քաղաքականութեան: Մարդը՝ իրաւասութիւն  
չկրնար ունենալ երբեք այսքան ստրաբար անիրաւե-  
ռու մարդուն, ճնշուած և անպաշտպան մարդուն՝ իրեն  
նմանին: Բաւական է, բաւական է, ո՛վ անազորոյն  
բռնակալներ: (Մարտիկ ներս կը բերէ երեք անձանօր-  
ները: )

ՏԵՍԻԼ. Ը.

ՆՈՅՆՔ, ՍՊԱՍԱԽՈՐԾ եի ԱՆԺԱՆՕԹՆԵՐԸ

Մարտիկ .— Ահաւասիկ, տէր իմ, հալածուած երեք  
անձերը ձեզ կը ներկայացնեմ:

Պօղոս .— Պարսններ, ներողութիւն կը ինդրենք  
ձեզմէ որ քիչ մը անհանգիստ պիտի ընենք ձեզ՝ մեր  
վիժակին վրայ գանգատելով: Մէնք ձեզի կը դիմենք  
երբեւ պաշտպաններ ճնշուածներու և հարստանարուած,  
ներու և կը հաւատանք թէ՝ գուք կրնաք մեզի օգ-  
տակար խորհուրդներ տալ և պաշտպաննել մեր դատը  
արժանապէս:

Հրանդ . Եւ ընկերք .— Քաւ լիցի, մէնք շատ զս:  
Ենք ձեր ներկայութենէն և պիտի ջանանք մեր կրցածը  
ընելու:

Պօղոս .— Ես աղքատ երկրագործ մըն եմ և այն  
երկերը զօր կը մշակեմ՝ ժամանակու իմ սեփականու-  
թիւնս էր, վաշխառու մը յափշտակեց զայն ինձմէ վեց  
տարի առաջ, և սակայն նենգութեամբ ամէն տարի ա-  
նոր տուրքը ինձմէ կը պահանջուի, հիմա վարձկան  
մըն եմ, չորս զաւակ սանիմ, կիսո, ծեր հայրս ու ծե-  
րունի մայրս միասին ութը հոգի ենք, ու վերջին ծայր  
աղքատութեան և թշուառութեան մատնուած, միշտ  
թալլուած և անիրաւուած: Հիմա, այս յափշտակուած  
հողերուն բարդուած տուրքերն ալ ինձմէ գանձելու հ-  
լած են բռնի և բռնա՛զետական ոստիկաններէ հալա-  
ծուելով՝ հոս ձեր պարտէզը ապաւինեցայ. գթութիւն  
և իրաւունք, Պարօններ, մեր դատը պաշտպաննել պէտք  
է, գուք ուժով էք կրնաք ձեր ձայնը լոկի ընել տալ:

Յակոբ .— Ես ալ երկրագործ մըն եմ աղքատիկ ու  
տոկոսով զրամ փոխ առած եմ վաշխառուէ մը՝ տասը

տարի առաջ միայն հարիւր դրւ.։ Այդ դրամը իր տուկոսվ միասին պայմանագումն վճարած եմ, սակայն վաշխառուն հաշիւս փակած չըլլալով, ամէն աարի քըմածին յաւելումներ ըրած է և եղած է գումարը հազար հինգ հարիւր դրւ.։ Ես այս եղած անիրաւութեան չը հանդուժելով դատարան դիմեցի օրինաւորապէս և սակայն դժբաղդաբար ինծի աննպաստ կերպով վճռուեցաւ դատը, որով պարտաւորեցին զիս կամ վճարել այդ գումարը և կամ երկարժամանակնեայ բանտարկութիւն մը կրել, առնուազն վեց ամիս։ Ազնիւ պարսներ, եօթը զաւակներու աէր եմ, տան մէջ տասը հոգի ենք և ամէնքն ալ միայն ինծի կ'սպասեն՝ չոր հաց մը գտնելու համար։ Կը պաղատիմ ձեզի որ ճար մը գտնէք իմ այս անտառնելի վիճակիս։ (Տրմուրեան եւ զայրորի նշաններ կ'երեւին Հքանիլին եւ ընկերներուն վրայ։)

Դրիգոր. — Ես հասարակ մուճակագործ մըն եմ եւ վաճառականին հաշւոյն աշխատող։ Եօթը տարի առաջ կաշիի վաճառականներէն մէկուն քիչ մը պարաք ըրի հինգ հարիւր դրւ.ի ապառիկ ապրանք առնելով։ Գործու ձախորդութեան մատնուեցաւ, ծանր հիւանդութիւն մը կրեցի վեց ամիս, եւ չկարողացայ պարտքիս մասնավճարները օրը օրին տալ։ Երեք տարի վերջը, արդէն հազար երեք հարիւր դրւ.ի բարձրացած էր, ահա եօթը տափի է եւ վաճառականը զիս պայտաւոր ըրած է վատաբար երկու հազար ինը հարիւր դրւ.ի։ Այս եօթը տարուան ընթացքին մէջ շաբաթուան չորս օրերը անոր հաշւոյն աշխատած եմ, որ միջին հաշւով ամիսը կ'ընէ տասնեւվեց օր եւ եթէ առնուազն տասը դրւ. հաշուըուի օրական՝ ամսական վճարած կ'ըլլամ հարիւր վաթսուն դրւ. եւ աշխատութեան տարին տասը ամիս սեպելով մէկ տարուան մէջ վճարած կ'ըլլամ հազար վեց հարիւր դրւ.։ Եւ չորս տարիէն վեց հազար չորս հարիւր դրւ.։ որով ոչ թէ միայն տալիք չեմ ըստ օրինի ալ և բազում պահանջ ունիմ, բայց դատարանը կաշառուելով

իմ փաստերս ու վկաներս անիրաւ հանեց։ Գթութիւն ունեցէք և օգնեցէք ինձի։

Հրանդ. — Դուք ձշմարիտ կը խօսիք եւ մենք կը հաւատանք ձեր ըսածներուն ստուգութեան, բայց մենք ձեզի անմիջական օգնութիւն չենք կարող տալ։ Դուք գացէք ժողովաւորդը յուզեցէք որ իրենց իրաւունքը պաշտպանելու ուժգին միջոցներու վրայ Թող խորհին։ Ահա քիչ ատենէն մենք պիտի պատրաստուինք անիրաւութիւններուն դէմ բողոք բարձրացնելու, դուք ալ համախոններ եւ վիճակակիցներ հաւաքելով պատրաստուեցէք օգնելու սուրբ դատին որ ձերն է եւ մերը։ Գացէք եւ ժամանակ մը կորսնցնէք, մաէք ժողովը դեան ամբոխային խաւերուն մէջ, դո՛ւք, ժողովաւորդին հարազա՛տ զաւակները, եւ ճշմարտութիւնը մերկացուցէք, փոթորկեցէք անոնց որտերը, թո՛ղ մէկ սիրտ եւ մէկ հոգի ըլլան եւ իրենց արդար դատին համար կռուիլ գիտնան որպէս զի շահին։

Ցիրան. — Պարունակը, աղաչելը վատ եւ անզօր միջոց է, բողոքելը արդարութիւնը տիրապետած տեղերու համար է, իսկ բացարձակ անիրաւութեան եւ վատութեան դէմ կռուիլ պէտք է անպայման եւ ուժգին։

Աշոտ. — Դուք մի փափաքիք որ խնդիրները առերեւոյթ կերպով դարմանուին, առանց անոնց պատճառները վերցնելու, համակերպական միջոցներու մի դիմէք, մեղք է ժողովաւորդին, այսպէսով աւելի վատթար պիտի ըլլայ անոր կացութիւնը՝ վաղանցիկ և պատիր խաղաղութիւն վայելելով։

Վարան. — Սարսափելի՛ է, սարսափելի՛, այս ո՛րքան անիրաւութիւն, մարդկութիւնը տաժանելի ստըրակութեան տափի կը գտնուի և տակաւին աղաչելու եւ պաղատելու կը պատրաստուինք, շատ ուշ մնացեր էք, պէտք է որ ըմբուտանաք այլ եւս, պէտք է ձեր իրա-

ւունքները ցոյց տաք ամէնուն՝ այս անդամ մարտնչեւ  
լու ուժով և զէնքի զօրութիւնով :

Պօղս.— Որով, պէտք է որ անզատճառ կռուինք,  
այնպէս չէ, կը հասկնամ, արդարացի է ձեր այս խոր-  
հուրդը, շնորհակալ եմ :

Յակոբ.— Այո՛, պիտի կռուինք, այսուհետեւ գոնէ  
չալածուելու համար :

Գրիգոր.— Բոնութեան դէմ բոնութիւն, որովհե-  
տեւ գերութեան և յափշտակութեան տակ բաւական-  
ճնշուցանք, եթէ մենք ալ երկրագունդին վրայ իրա-  
ւունքներ ունինք՝ պէտք է որ վայելենք զանոնք ու  
պէտք չէ որ սարկանանք ուրիշին քմահաճոյքներուն :

Երեք հալածուածները.— Մնաք բարով ուրեմն,  
ազնիւ պարո՞ններ, և քիչ ատենէն թերեւս պիտի տես-  
նուինք իրաւունքներու պայքարին ընդարձակ կրկէսին  
մէջ, մնաք բարով : (Իը մեկնին :)

### ՏԵՍԻԼԻ Թ.

### ՀՐԱՆԴ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Աշոտ.— Ուրեմն համամիտ ենք ամէնքս ալ որ  
կաղմակերպուի ժողովուրդը՝ կատարեալ յաջողութեան  
համար, այնպէս չէ :

Ընկերները.— Անտարակոյս այնպէս է :

Վահան.— Մենք ալ ձեզի հետ ենք, երթամ որ-  
քեմն ու պատրաստեմ ազատականներու բանակը,  
միայն թէ ներկցէք որ մենք ձեզի պիտի հետեւինք,  
մնաք բարով ուրեմն, ցտեսութիւն պատերազմի դաշ-  
տին վրայ...: (Աւճանակը ձեռը բոնած դուրս կ'ելլի :)

### ՏԵՍԻԼԻ Թ.

### ՀՐԱՆԴ, ԱՇՈՏ ԵՒ ՏԻՐԱԱՆ

Հրանդ.— Պայը վճռական է, մենք պիտի պա-  
տերազմինք ճշմարիտ սկզբունքներու համար, կողոպ-  
տուող և ջարդուող նահատակ ժողովուրդներու համար,  
աճապարհ'նք, երթա՞նք մեր գունդերը կազմ և պատ-  
րաստ ընկելու :

Տիրանն .— Լուրը տարածուած և ամէն մարդ պատ-  
րաստուած է, շուտով երթանք որպէս զի չպաշտօնուինք  
այս աշխատանոցին մէջ :

Հրանդ.— Երթա՞նք, երթա՞նք բոնութեան դէմ  
պատերազմելու, բոնութեանէն արդարութիւն և իրա-  
ւունք ետ խլելու :

Ամէնքը միասին .— Երթա՞նք, երթա՞նք, բոնու-  
թեան դէմ պատերազմելու, բոնութեանէն աւդարութիւն  
և իրւունք ետ խլելու :

(Թուրան կ'ելլին եւ վարագոյրը կ'իշնի :)

Ա Ր Ա Ծ ՈՒ Կ Ա Ծ Բ .

ՏԵՍԻԼ Ա .

(Տեսարանը կը ներկայացնէ բնիդարձակ աշխատանց մը, սեղաններ, արուներ, բարեսներ, երկրագունք, գիտական զատալան զործիքներ, վարագոյր կը բացուի, Մարտիկ ներա կը մտնէ, կը ըսկէ, կը կարգադրէ եւայլլէ :)

ՄԱՐՏԻԿ ԱՌԱՆՉԻՆ

Մարտիկ .— Կոմար գնաց նորէն , քանի մը որէ ի վեր աճապարանք մ'ունի , մէյ մը կ'երթայ , մէյ մը կուգայ , տեսակ տեսակ մարդիկներ կը բերէ հետք , գիշերը մինչեւ լոյս , եկող դացողը անպատճառ է , բաներ մը կը դառնայ , բայց խելքս չասնիր . երբեմն ալ մինակը կը խօսի , և այնպէս մը կը խօսի որ բան մը չես հասկնար , ֆրանսերէն կը խօսի՝ թէ անգլերէն , բայց քիչ մը հայերէնի կը նմանի որովհետեւ երբեմն բառերը կը հասկնամ : Ասպարանքին բոլորտիքը ոստիկանները շարունակ կ'անցնին ու կը դառնան , բաներնիս բուրդէ , կարծես թէ ասոր վերջը գէշ պիտի ըլլայ : Մարդ Աստուծոյ , քեզի ի՞նչ պէտք է քաղաքին մեծերուն դէմ ելլել , անոնցմէ սպասելիք բան մը չունիս , աւելի աղէկ , անոնց հետ բառեկամ եղիր , վայելքդ նայէ : Սակայն եթէ շիտակը պիտի խօսինք , քիչ մը իրաւունք ալ ունի , որովհետեւ անոնք ալ թշուառ ժողովուրդը կը հարստանարէն , և շատ անդութ մարդիկներ են , եթէ շիտակ մարդ ես չես կրնար համբերել : Մեր Կոմար ալ շիտակ մարդ , բարի և աղնիւ սրտի տէր , համբերութիւնը կը հասնի , դէմ կը խօսի և անոնց հետքինքն մը կը դարձնար :

աեղը գէշ մարդ կ'ըլլայ : Իրաւ որ ես ալ քիչ մը թուլ քերան եմ , իմ ինչի՞ս պէտք է , ես իմ գործա նայիմ , աշխարհիս վրայ եթէ հանգիստ ապրիլ կ'ուզես վիճակէդ գուն եղիր , ուրիշին գործին մի՛ խառնուիր , մարդու վրոյ բան մի՛ խօսիր , և անա հանգիստ ու երջանիկ կ'ըլլաս : Իմ բնութիւնս ալ լման այդպէս է , անոր համար ալ շատ սիրուած եմ , շատ ալ հաւատարիմ ճանչցած են զիս : Կ'ուտեսմ , կը խմել վայելքիս կը նայիմ . բայց պիտի ըսէք թէ ի՞նչ եմ եղիր , ինչ կ'ուզէ ան թող ըլլայ հոգս չէ , քանի որ առողջ ու հանգիստ եմ : Կը զարմանամ թէ սա մեր Կոմար ի՞նչ տեսակ մարդ է , երկա՞թ է , քա՞ր է , ի՞նչ է , միշտ կ'աշխատի , կը գրէ . կը խօսի բնաւ որախութիւն չըներ :

Բաղդա չորնայ , բաղդ չէ որ : Հարուստ աղջիկ մը կայ , ձեւաւոյ օրինորդ մը , բայց ի՞նչ գեղեցիկ , ի՞նչ լեզուանի , եօթը լեզուէն կարդալ գիտէ , ձեռագործ , ձեւ , կար եթէ ըսես՝ հատած է վրան , անանկ տանտիւկին է , անանկ տանտիւկին է որ տուներնին եթէ երթաս , ի՞նչ զարդեր , զարդարանքներ կը տեսնես : Հօրը , մօրը աշքին լոյսն է , մեծ ափիկններու և պարոններու հետ կը նստի կ'երլէ : Այս օրինորդը ժամանակէ մը ի վեր սիրահարած է մեր Կոմարն , բայց Կոմար անոր երեսն ալ չնայիր , սակայն շատ կը յարգէ զայն : Իրաւ որ զարմանալու բան է , եթէ ասոնք իրարու հաւանած ըլլային իւղու հարսնիք մը կ'ընէինք , ես ալ Տիկին մը կ'ունենայի որ իմ ծառայութիւններս կը վարձատրէր : Այս աղջիկը երկու երեք օրը անդամ մը կ'այցելէ Կոմարն , նախ քիչ մը կը զուարձանայ , ետքը նորէն ախով վախով կ'երթայ : Հա , աղէկ միտքս ինկաւ , այսօր ալ այցելութեան օրն է , կրնայ ըլլալ որ հիմա գայ , շուտ ընկնք և համցնենք , ես անոր փափաքը չնմ կրնար մերժել , սիրուն բան է , անուշիկ աղջիկ մըն է . մարդուս սիրաը կը փառաւորուի երեւ երեսը նայի և գեղեցիկ ձայնը լուէ : Երեմն մշտքս կը դնեմ այդ աղջկան

խօսքը բանալ կոմմին որ սակայն բնաւ երես չտար ինձի, եթէ ոչ ես զայն պիտի համոզեմ: Ասանկ բանեառուն բարկութիւնս կ'ելլէ, պարապ գլուխ է վերջապէս, կ'երեւի աշխարհը պէտք եղածին պէս չճանչնար, տարիքով բաւական մեծ է, բայց փորձառու չէ, օդին մէջ կ'ապրի տակաւին: Օրէնք է որ մարդ երբ քսանը հինգը կ'անցնի՝ կամուսնանայ, մանաւանդ երբ հարուստ է, որպէս զի կանոնը տեղը տանի ու գաւակներ ունենայ: Նայինք եթէ բաղդ ունինք այս հարսնիքը կը վայելնք: Երբ բանի մը չես կրնար հասնի՛ ուզես չուզես կը համակերպիս: (Դուռը կը զարնուի: ) Հը, ահա եւ կաւ, իրեն զարնուածքն է, անկասկած օրիորդն է, երթամ բանամ դուռը և ներս հրացցնեմ, ու քիչ մը հետքոսքի բռնութինք. Եհ, ի՞նչ կ'ուզես, հարկ է առիթէն օդուտ քաղել, այս ալ բազդաւորութիւն մըն է: (Վերայ դուռը կը բանայ եւ կը հրամցնէ օրիորդը: )

### ՏԵՍԻԼ. Բ.

#### ԱՍՏՂԻԿ ԵՒ ՄԱՐՏԻԿ

Մարտիկ.— Հրամմացէք, օրիորդ, ներս հրամմացէք:

Աստղիկ.— Արդեօք Պրն, Հրանդը տունն է:

Մարտիկ.— Ո՛չ, օրիորդ, սակայն հիմա պիտի գայ:

Աստղիկ.— Լաւ զիտե՞ս թէ, քիչ ատենէն պիտի գայ, ուրտե՞զ է արդեօք:

Մարտիկ.— Լաւ չեմ զիտեր, քիչ մը հանգիստ ըլլէք:

Աստղիկ.— Ուր գնալը իրօ՞ք չես զիտեր:

Մարտիկ.— Արրուն օրիորդս, իրաւ որ ուր գնալը որոշ կերպով չեմ զիտեր, և սակայն չուտ գալէն տեղեկութիւն ունիս:

Աստղիկ.— Ինչէ՞ն դիտես:

Մարտիկ.— Որովհետեւ ձեր այցելութեան օրն է այսօր:

Աստղիկ.— Որո՞վ:

Մարտիկ.— Որով չպիտի կրնայ համբերել երկար ատեն և պիտի աճապարէ:

Աստղիկ.— Ո՛չ, չեմ յուսար, երանի՛ թէ այնպէս ըլլար:

Մարտիկ.— Բայց կոմմը ձեզ շատ կը յարգէ, օրիորդ:

Աստղիկ.— Եհ, միայն այլչափ, ինչպէս կը յարգէ միւս բոլոր տիկիններն ու օրիորդները:

Մարտիկ.— Քաւ լիցի, ձեզ ամէնէն աւելի կը յարգէ, (մելուսի) հիմա սուտ ալ պիտի խօսինք, լաւ: (Աստղիկի դաւնալով) հաւատացէք որ սովորական օրերը թափթափ կը կենայ իսկ ձեր այցելութեան օրերուն կը շքուի, կը զարդարուի, ու տարօրինակ և ազուոր հրամաններ կուտայ, հետո կատակներ կ'ընէ, ուրիշ ժամանակ բարեւ ալ չտար, երեսը ծուռ մը կը նստի, և նոյն իսկ սուրճը կը մոռնայ խմելու:

Աստղիկ.— Հա՛, հա՛, հա՛, ծօ ապի՛րատ, ատանկ ժանր կատակներ մի ըներ հետս, ես շատ լաւ կը ճանչնամ կոմմը:

Մարտիկ.— Հաւատացէք որ չեմ կատակեր, միթէ ես կրնամ կատակել շնորհալի օրիորդի մը առջեւ:

Աստղիկ.— Կը հասկնամ որ իմ մասիս համակրանք մ'ունիս, բայց չեմ յուսար որ կոմմն ալ համակրած ըլլայ:

Մարտիկ.— Ես կը յուսամ որ այս՛, և վերջապէս ո՛ւ մը դաւք փորձով պիտի տեսնէք իրեն համակրութիւնը:

Աստղիկ.— Եհ, լիցիւ թէ այդպէս ըլլար, այդ օրը, երջանիկ օր մը պիտի ըլլար, բայց կը տարակութիմ...:

**Մարտիկ.** — Օր մը իրաւունք պիտի տաք ինձի և պիտի վարձատրէք զիս իմ բարի տրամադրութիւններուս համար, ևս վատահ եմ:

**Աստվիկ.** — Միայն թէ այդ օրը շատ պիտի ուշանայ... գուցէ բնաւ չմօտենայ...: Քիչ մը անհանգիստ եմ Մարտիկ:

**Մարտիկ.** — Հանգիստ եղէք, օրիորդ, ծառայ եմ ձեր հրամաններուն,

**Աստվիկ.** — Բայց ես մինակս պիտի սպասեմ, այնպէս չէ:

**Մարտիկ.** — Դուք գիտէք, ինչպէս որ կը բարեհաճիք:

**Աստվիկ.** — Է՛ս, հոգ չէ, արտեղ անծանօթի մը տունը չէ, դուք կրնաք ձեր գործերով զբաղիլ, արգելք չըլլամ:

**Մարտիկ.** — Բնաւ երեք, ընդհակառակը ես ձեզի ձանձրոյթ պատճառել չեմ ուղեր, աղնիւ օրիորդ, և ձեր հրամանները կատարելու պատրաստ եմ. ներողութիւն: (Մարտիկ դուրս կ'մլի)

### ՏԵՍԻԼ. Գ.

### ԱՍՏՎԻԿ ԱՐԱՆՁԻՆ

**Աստվիկ.** — (Լրջօրեն ժիշ մը խորհրդածելի վերջ:) Կը զարմանամ սա միամիտ աշխարհին վրայ որ կ'երկպագէ դրամի և զօրութեան առջեւ միայն և յիմարաբար շգիտեր թէ ուր է յաջողութեան և յաղթանակի գաղտնիքը:

Երկրի վրայ մինչեւ հիմա արիապետած է կինը, անոր հմայքը ամենէն զօրել և մըահեծան հմայքը եզած է: Կ'ուղե՞ս յաջողիլ. — Կնոջ զիմէ: Կ'ուղե՞ս մէծ-

նալ. — Կնոջ աղաջէ: Կ'ուղե՞ս յաղթել. — Կնոջ երկբրպագէ: Բնութեան մէջ կնոջ հրապոյը հաւասարակշռող հրապոյը չկայ բնաւ: Պատմութիւնը կնոջ քմահաճոյքներուն և ժամանցներուն զօլեհիան է: Կինը ամէն տեղ և ամէն բանի մէջ է, մասնաւանդ հոն է՝ ուր բնաւ չերեւիր, մանաւանդ հոն է՝ ուր խնդիրը իրեն չվերաբերիր: Ան իր գիւթական պաշտօնը կը կատարէ կատարեալ պաղարիւնութեամբ և առանց արտաքին ցոյցի: Ան իր նպատակին կը հասնի անպատճառ իր ապահով գործիքներով և անհուն գաղտնի միջոցներով...: Այս ցնորած երիտասարդները կը կարծեն թէ առանց կնոջ միջնորդութեան ո և է նպատակի մէջ կրնան յաջողիլ. Բայց չարաչար կը սխալին, մանաւանդ երենց մզած պայքարը տգիտութեան դէմ է, հետեւաբար կնոջ դէմ:

Թշուատական, երբ կնոջ տիրապետութեան տակ չե՞ս՝ գաղտնիք չունիս, մատնաւած ես, երբ կնոջ չե՞ս ծառայեր՝ պաշտօն չունիս, լըուած ես. երբ կինը չե՞ս պաշտեր և անոր քմահաճոյքներուն հլու գերի մը չե՞ս պայքար՝ կը հալածուիս, կը չարչարուիս, մինչեւ կախազան կը բարձրանաս:

Հրանդ պիտի կախուի, իր ընկերները շղթայակապ պիտի հեծեն զնաւաններուն խորը և ես յաղթականորէն պիտի աեւնեմ անոնց ստրկանալը, սիրտս պիտի զովանայ, զիէ՞ժո պիտի յագենայ: Այս չոր ու ցամաք սըրտերը, որոնք սիրել չեն գիտեր բնաւ, և կ'երազեն միայն սկզբունքներ ու բառեր և սիրահար են գաղափարներու լոկ, անհիւթ յիմա! խորութիւններու՝ իրենց ցաւագար լրջութեամբ կ'անպատուեն հրապոյներու աշխարհը:

(Հրանդի պատկերին մօտենալո) Ով, յանդուգն երիտասարդ, զուն մերժեցիր զիս, ինձով իմ սէրս և իմ հրապոյըներս. արհամարհնեցիր իմ գեղեցկութիւնս, սաւած սիրտ մը ցոյց տուիր իմ այրումներուս և փողփողումներուս, քեզի երջանկութեան նեկտարը մօտե-

ցուցի, բայց դուն դժոխային դէմք մը ներկայացուցիր ինձի, վայրագօրէն անարգեցիր իմ կնոջական արժաւ նապատռութիւնս և քու ցնորական գաղափարներուդ ետեւէն դացիր:

Ա՛զ խճալի և անօթի մարդկութեան սիրահար, զնա՛, աղատէ՛ սիրած մարդկութիւնդ բոնապետութիւն ճիրաններէն, մանաւանդ դուն քեզ իմ՝ դրուապէն զի դուն չ'աղատիս իմ վրէժխնդրութենէս. ամօթ, բերի այսօրուան տագնապալի կացութիւնը: Կը աեսմիամիտա...: (Քիչ մը կը հանդարտի:)

Հիմա Զապէլ պիտի գայ, և իրեն հետ պիտի բերէ Նենամ կեանքիս ամէնէն հրճուազին վայրկեանը, որով չնետեւ վստա: Եմ թէ, աշխատութիւններս պարապը ինքն է որ կուգայ: Ա՛, կը դողա՞մ՝ ուրախութենէս, կը սարսուամ հրճուանքէս, սաստիկ իրարանցում մը դժբաղդ վայրկեաններուն տոկացեր ես, կարելի՞ է միթէ որ հիմա այսքան ուրախ առիթի մը մէջ ուժաթափ ըլլաս: (Ինչզին չկրնար բոնել եւ արոտի մը վրայ կը նսի): Ա՛զ ճակատազիր, տղիտութեան ահեղ պաշտան, դուն որ աղջերունն ես, դուն որ շատեհունն կամէութիւններ գործադրելու...: (Զապէլ ներ կը

ՏԵՍԻԼ. Դ.

ԱՍՏՂԻԿ ԵՒ ԶԱՊԷԼ

Աստղիկ.— Ա՛խ, սիրելիս, ո՞ւր մնացիր, համբեցութիւնս հատաւ տեսնեմ բերլո՞ր նամակիս պատասխանը:

Զապէլ.— (Նամակը կը հանի ծոցեն եւ տալով.) Մի, այդչափ անհամբեր ըլլար, օրիորդ, երբ մանաւանդ նպատակիդ համելու ապահովութիւնը կը վայելես:

Աստղիկ.— (Նամակը կ'առնի, պահարանը բանալով) Խւրիշ բան մը չըսա՞ւ:

Զապէլ.— Ոչ, օրիորդ, միայն թէ կը փափաքիմ, ըստ, օրիորդին այցելութիւնը վայելել երկու օրէն:

Աստղիկ.— Շատ լաւ, կարելի է, ինչո՞ւ չէ:

Զապէլ.— Ի՛չ, գաժան մարդ մըն է, մի ցաւիք, օրիորդ:

Աստղիկ.— Ա՛հ, հոգս չէ, գիտեմ որ գաժան է, բայց դուն ինչն գիտցար:

Զապէլ.— Եր գիմագիծերէն և շարժումներէն, շատ անհանգիստ կ'երեւէր:

Աստղիկ.— Անուշս, դուն չեն գիտեր թէ ո՞րքան մեծ դժուարութեամբ եր որ յանձն առի այդ անպիտան մարդուն հետ տեսնուիլ, բայց ի՞նչ ընեմ, ճակատագրական է:

Զապէլ.— Եւ սակայն ան մասնաւոր պաշտօնեայ մըն է, չեմ յուսար թէ ձեզի կրնայ օգտակար ըլլար, որովհետեւ կը զբաղի միայն քաղաքական բնոյթ ունեցող հարցերով, իսկ դուք չէք ախորժիր այդպիսի հարցերէ:

Աստղիկ.— Զապէլ, դուն առայժմ մի՛ կտակածիր

իմ վրաս, պէտք է գիտնաս որ իմ բուն նպատակս պարզապէս դաս մը տալ է և ոչ թէ վրէժինդրութիւն:

**Զապէլ.** — Կը հասկնամ, այո՞ :

**Աստղիկ.** — Ուրեմն պարտէզ իջիր, սիրելիս, և հըսկէ, չըլլայ որ կոմար գայ մինչեւ որ նամակս կարդամ, որովհետեւ գաղանի է:

**Զապէլ.** — Շատ լաւ, կը հնազանդիմ, հապա եթէ գա՞յ:

**Աստղիկ.** — Առանց աճապարանքի շարժումներ ցոյց տալու՝ կուգաս ինծի կիմայնես, թէպէտ վախնալու բան չկայ:

**Զապէլ.** — Ամէն պարագայի մէջ պէտք եղած զգուշովթիւնները պիտի ընեմ: (Կը մեկնի՞ :

ՏԵՍԻԼ. Ե.

### ԱՍՏՂԻԿ ԱՌԱՆՁԻՆ

**Աստղիկ.** — (Նամակը ձեռքը առնելով կը կարդալ) :

Ամենասիրենի Աստղիկս,

Գաղանի կրտսութեան Տեսչութեան ձեր ըրած ծառայութիւնները հարկ չեմ տեսներ մի առ մի թուել, միայն յիշեմ թէ, ձեր տուած վերջին երեք տեղեկութիւնները ամենամեծ ծառայութիւններ նկատուած են որոնց երախտագէտ ըլլալու գիտակցութիւնով կը յայս տարարեմ ձեզ թէ, ձեր հակասակուրին և անոր կուելած է: Ամէն օր և ամէն ժամ գաղանի դատավճիռը թիւններ կ'ըլլան գաղափարական և ազատամիտ անձերէ: Ձեր ոխերիմն ալ թակարդ պիտի իյնայ, ազատ

ապրելու քանի մը օրեր հաղիւ ունի թերեւս: Ապահով եմ որ քիչ ատենէն ձեր ըրած ծառայութիւններուն փոխարէն՝ պիտի ստանաք մեր ընելիք ծառայութիւններուն գիխաւոր ապացոյցը:

Համեցէք, ուրեմն, չորհալի օրիորդ, ընդունիլ մեր ջերմ համակրանքին և սիրոյ հաւասարին:

1940 Փետր. 5

Մ... Մնամ անձնուէր Զեր ազնուութեան, Գաղանի կրտսեսութեան Տեսուչ Ա. Յ.

ՏԵՍԻԼ. Զ.

### ԱՍՏՂԻԿ ԵՒ ԶԱՊԷԼ

**Զապէլ.** — (Ներս մտնելով.) Օրիորդ, շուար ըրէք, նամակը պահեցէք կոմսը կուգայ:

**Աստղիկ.** — Հոգ չէ, թող գայ:

**Զապէլ.** — Բայց չըլլայ որ կասկածի:

**Աստղիկ.** — Ոչ, բնաւ մի շփոթիր, կոմսը այնքան վեհանձն է որ նոյն իսկ մեզմով չպիտի հետաքրքրուի ու չպիտի կասկածի մեր վրայ:

**Զապէլ.** — Այդքան ալ չէ կարծեմ, խորագէտ մէկն է, ամէն բան կարող է դիւրութեամբ համակալ, բայց ստուգիւ վեհանձն է:

**Աստղիկ.** — Այդքան վեհանձնութիւնը չափազանցութիւն է սակայն:

**Զապէլ.** — Ես հո՞ս կենամ թէ դուրս ելլեմ:

**Աստղիկ.** — Ոչ, դուրս ելլել անքաղաքավարութիւն է, արդէն սովորական բաներ պիտի խօսինք, եթէ հարկ ըլլայ ես քեզի նշան կ'ընեմ դուրս կ'երթաս և ինծի կը սպասես:

**Զապէլ.** — Լաւ, ահա եկաւ:

## ՏԵՍԻԼԵ.

## ՆՈՅՆՔ ԵՒ ՀՐԱՆԴ

**Հրանդ.** — (Ներս մտնելով.) Ա՛հ, օրիորդներ, դուք հետ էք, շատ գո՞ն եմ որ երբեմն աշխատանոցս կ'այցեւեք, բայց խնդրեմ, չըլլայ որ ելեկարական գործիքներուն և քիմիական բաղադրութիւններուն ձեռք դպրանէք, կը վնասուիք:

**Աստղիկ.** — Պարան, ապահով եղէք որ այդպիսի անխոնեմութիւններ չենք ընկր, և ձեր ազնուութեան այնքան անձնուէր ենք որ իր աշխատանոցին գործիքները իրեն չափ կը յարգենք:

**Հրանդ.** — Սրամիտ աղջիկ մըն ես դուն, Աստղիկ, իրաւ ալ այնպէս է, ևս քիչ մը գործիքներուա՝ գործիքներս ալ քիչ մը ինձի կը նմանին: Ի՞նչ կ'ուզէք, օրիորդ, գիտութեան և իմաստութեան դար է, բան մը աւելի սորվիլը և փորձով գիտնալը՝ աւելի կ'արժէ քան դատարկ և թնթեւարարոյ կեանք մ'անցնելը:

**Զապէլ.** — Ո՛հ, տէր իմ, այս գործիքները ձեր երիտասարդութիւնը կը մաշեցնեն, անոնք շատ բիրտ ու անոլոք են, մեղք չէ այդ գեղեցիկ հասակիդ, ձգեցէք պահ մը այս դաժան աշխատութիւնները և աշխարհի հեշտալի երջանկութիւնը վայելեցէք:

**Հրանդ.** — (Քմծիծալով) սիրունիկս, դուն զեռ թերեւս ալ մանուկ ու թիթեանիկի պէս ըլլաս, ու ես մանուկ ըլլալէ դադրած՝ հատուն երիտասարդ մըն նամ: Նայեցէք աշխարհ ըսուած ոճիրներու անդունդին գրայ որ թշուառ մարդկութեան տառապանքը կը ճանչ վրայ որ թշուառ մարդկութեան գերեզմանատունն է միայն: Ես ի՞նչպէս կրնամ այս գիտակցութիւնովս ձեր

փափաքնե՛րը կատարել: Անհոգ եղէք, ես երջանիկ եմ, որովհետեւ տառապող մարդկութիւնը կը սիրեմ և անոր անձնութիրաբար կը ծառայեմ. գուք ալ գացէ՛ք երջանիկ եղէք մարմնական հեշտանքները սիրելով և անոնց միայն ծառայելով: Պարզ է թէ մարդիկ իրենց կոչման չափ մարդ են և զայն միայն կ'արդարացնեն:

**Աստղիկ.** — Ո՛հ, ի՞նչ ամպոտ նախադասութիւններ, ի՞նչ գոթորկոտ զգացութենք ունիս, բայց բռնութիւնը ամէն աել կը տիրագետէ և դուն անոր զան պիտի ըլլաս, կարմիր սարսափը տիրած է ամէն կոզմ, բռնաւորները գործի գլուխ են, ինայէ՛ կեանքիդ, զեռ երիտասարդ ես, ապրելու և վայելելու իրաւունք ունիս:

**Հրանդ.** — Այս՛, ապրելու, նպատակի ծառայելու և յազթութիւնը շուշելու իրաւունքը:

**Զապէլ.** — Կը սկսալիք, տէր իմ, ձեր անձին գէմ որոշ գտաւաճանութիւններ կան ինչպէս նաև բոլոր գաղափարականներուն դէմ:

**Հրանդ.** — Կրնան ըլլալ, բայց անոնք անզօր և շատ ճշճիմ ձեռնաշղներ են:

**Զապէլ.** — Իրաւ որ քաղաքականութիւնը դուք մեզէ շատ աւելի լաւ գիտէք, բայց այս տարիներս ցաւալի է ըսել որ չարաչար հալածանք կայ իմաստուններու և զիտութիւնով զբաղողներու դէմ, իսկ մենք իրեւ ձեր անկեղծ համակիրնելը, կաղաչենք որ զգուշանաք այն ցոյցերէն որոնք կրնան ձեր վրայ վատ ամբաստանութիւններ հրաւիրել:

**Հրանդ.** — Լաւ զիտեմ թէ զուք կը փափաքիք որ քիչ մը հաճոյակատար գտնուիմ ամէն անոնց որ ինձի կը մօտենան կամ կ'այցելեն, այս, իրաւունք ունիք, քաղաքալիտական տեսակէտով, բայց սկզբունքի տեսակէտով ոչ, որովհետեւ ես ընաւ չեմ կրնար զիջումը ընել կամ հաճոյակատար գտնուիլ սկզբունքային իրնդիրներու շուրջ, սիրով կը հրաժարիմ ամէն կարգի մե-

ծութիւններէն բայց սկզբունքի բարձունքէն երբեք ու կը փափաքիմ որ դուք ալ այնպէս ըլլաք : Զապէլ .— (Զարմանալով) մենք ալ այնպէս ըլլանք , շատ ալ գիւրին բան չէ , ոչ ալ պատշաճ , որովհետեւ մենք տարեր ներշնչումներ ունինք որոնք շատ բնական են և մեր սեռին լաւազես կը յարմարին . առողջ իմ կարծիքով լիովին կրնան պատշաճիլ ձեր անձին ալ , քանի որ երիտսարդ , վայելուչ , իմաստուն և հարուստ էք :

Աստղիկ .— Սրդարեւ Զապէլ , շատ նրբամիտ ես , իմ՝ ստ լաւ ըսիր . Է՞ս , սիրելի Հրանդ ո՛րքան բնական և ճշմարիտ են ըստները , Զապէլ իրաւունք ունի , այն պէս չէ :

Հրանդ .— Թերեւս . . . բայց ան քաղաքական կեանքէ չսակնար , իսկ դուն՝ գիտեմ որ լաւ կը հասկնաս , բայց չես ուզեր ճանչնար իրերու արդի վիճակը , եւ մարդկութեան թշուառութիւնը չտեսնել կը ձեւացնես և չես իսկ հետաքրքրուիր անով :

Աստղիկ .— Ո՞հ , դարձեալ կը մերժես մեր խորհուրդները , մեր փափաքները և թերեւս մեզ ալ :

Հրանդ .— Քաւ լիցի , միայն ձեր գաղափարները կը քննադատեմ , և քննադատելը մերժել չէ այլ՝ լուսաբանել այսինքն անոնց արժեքը բնորոշիչ կերպով եւրեւան հանել : Ես ձեզ մերժեմ և ինչու համար , մեր դարեկամութիւնը կրնայ հաստատ մնալ որչափ որ ալ

Աստղիկ .— Բայց դուն կնոջական փափկութիւններուն , ներշնչումներուն և հրապոյրներուն հանդէպ պաղարիւն կը գտնուիս յատկապէս և այս բանը քու աղնուութեանդ վրայ յայտնի կերպով կը նշամարուի :

Ո՞հ , միշտ թշուառը , միշտ տառապովը կը սիրես , բայց մոռնաս անատական և ընտանեկան քաղցր երջանքութիւնը և անուշ վայելքները :

Հրանդ .— Կը մոռնամ , այս , թերեւս կ'ուրանամ

ալ եթէ երբեք հիմակուան գործադրուած վայելքները կ'ակնարկես , ես կը պարսաւեմ զանոնք : Ճշգրտութեան և հաւասարութեան սկզբունքներուն վրայ չհիմնուած վայելքը խտրականութիւն է պարզապէս :

(Ասդիկ նօան կ'ընէ Զապէլի ին որ դուրս ելլէ )

Զապէլ .— Զեր վիճաբանութիւնը պիտի երկարի : Ներեցէք որ ես քիչ մը դուրս ելլեմ :

Հրանդ .— Ազատ ես , օրիորդ : (Զապէլ կը մեկնի ) :

### ՏԵՍԻԼԻ.

### ՀՐԱՆԴ ԵՒ ԱՄՏՂԻԿ

Աստղիկ .— Ահա վերջին անգամն ըլլալով կ'աղաւշեմ քեզի որ չմերժես զիս և իմ փափաքներս , թերեւս կ'համ օգտակար ըլլալ քեզի : Քու սիրոյդ համար բարխող տաք սիրտ մը հրաշքներ պիտի գործէ : Հեռու կեցիր բւնութենէն և բռնապետներէն , տգիտութենէն և ճակատագրէն . Բնութիւնը ինք անձամբ պաշտպան է անսոնց բռնաւորներուն բռնաւորագոյնը : (Ծունիկի կրուգալ) : Դուն մարդերուն մէջ դիւցաղն մըն ես , քեզի պայլիկ որ պերճութիւնները աշխարհիս , ես ալ կը վայելեն բոլոր պերճութիւնները աշխարհիս , ես ալ հրապոյրներէ ծնած եմ , պատլուն երազներու երկունք . . . հրաբուղիս մը կայ սրտիս մէջ որ մեծ աւերներ պիտի գործէ : Դուն հրաշալի բառ մը ունիս , հրաման մը ունիս կարկեցնելու զայն , որոտա՛ , որոտա՛ , հսկայ առիւծի մը պէս որոտա՛ ու թող հաճոյքը իր գունագեղ պստկը դնէ քու ճակատին , թող գարուն մը չնչէ սրտիդ վրայ , թող մայիս մը հալի երեւակայութեանդ լճին մէջ (ձեռնամած) կ'աղերսեմ , կը պաղատիմ , ինայէ՛ այդ կանանչ ու թարմ հասակիդ , և մանաւանդ ինայէ՛ ինձ դրժուածիս :

**Հրանդ.** — Այդ փափաքներդ և իղձերդ արդէն ծանօթ են ինծի, այս՝ և ալ քեզ կը սիրեմ ու երբեք ատած չեմ, բայց գիտցիր ու չբաւեր միայն անձերը սիրել, այլ պէտք է անոնց գաղափարներն ալ սիրել. և մարդկային թշուառութեան դէմ կոռուող անձնազո՞ն ֆէտային եմ, իսկ դուն զայն անտեսող ու տառապանչ քի գնով երջանկութեան փափաքող եսապաշտ հեշտաւ մոլ մըն ես: Սիրուն բամբիչ, դուն ինքնիրենդ քու ճանապարդ զատած ես: Դուն ոչ թէ միայն զիս չես սիրեր այլ եւ գիտակցարար կ'ատես դաղափարի մարդը, մարդկութեան վեշտը և ազգերու ապագան:

**Աստղիկ.** — (Ոտքի ելլելով) ուրբ՞մն...:

**Հրանդ.** — Ուրբմն կամ պէտք է ո՛ւ ներկուիս այն գոյնով որով ես ներկուած եմ, որով ներկուած են բոլոր դիւցազնները և կամ հրաժարիս խսդառ այն սէրէն որ լոկ մարմնական հանգամանք մը և գաղափարական ինկածութիւն մը ունի: Ես կ'ատեմ այն մարմինը որ հոգի և գաղափար չունի, դիակ մըն է, դուն ալ այդ չափ գեղեցիկ ըլլալովդ հանդերձ երբ սկզբունք և գաղափար չունիս դիակ մըն ես նեխած ու փատած...:

**Աստղիկ.** — Հերի՛ք է, հերի՛ք այդ քան անարդանք, մարդկութեան ծառայելը միմարութիւն է, դուն պիտի փշուիս տղիսութեան ժայռին զարդուելով, կեանքը անման չէ, կեանքը մահացու է, և վատաբար կը պարունակէ ծերութիւն մը ծերութիւն մը ու տկար ման կութիւն մը: Հազիւ քանի մը տարիներ ունինք վայելք ու երջանկութիւն ունենալու և ահա դուն անոնց մարմին ունիս, որով միայն մարդ ես: Հոգի և գաղափար երեւակայական բառեր են լսէ բնութեան ձայնը և անոր հաւատարիմ եղիր, բնութիւնը ճակատագրական և անողոք է:

**Հրանդ.** — Իսկ մա՛րդը՝ գիտակից ու կամեցող է:

**Աստղիկ.** — Ահա, ևս կ'երթամ, ու քիչ ատե-

նէն պիտի տեսնես թէ ո՞րն է դժուեմ իրականութիւնը: Հրանդ. — Գնա՛, և դուն ալ պիտի տեսնես թէ ո՞րն է արդար ճշմարտութիւնը:

**Աստղիկ.** — Այս՝, արդարութիւն և ճշմարտութիւն կախաղանին վրայ, զնտաններուն խորը:

**Հանդ.** — Իսկ անհոգի և անն զատակ գեղեցկութիւններն ալ աղբանոցին կամ գերեզմանին փոտած ծոցը: (Ասեղիկ կը մեկնի զայրացած)

ՏԵՍԻԼ Թ.

### ՀՐԱՆԴ ԱՌԱՆՁԻՆ

**Հրանդ.** — Գնա՛... գնա՛... ուր որ կ'ուզես հոն գնա, չա՛ր աղջիկ, քու ձեռքէդ ամէն վատառութիւն կուզայ բայց ես չեմ վախնար... ախ, անոելի է այս, ահոելի...: Կինը ստեղծուած է վեհագոյն կոչումով մը, մայրութեան պաշտօնին համար որ կարող է ցեղեր ու աղեր դաստիարակելու քաղաքակրթութիւնը տարօրինակ երջանկութիւնով մը օժտելու, բայց զժարդար ան եղած է միայն մարմնաղէն կախարդական հրապուրիչ միքնայ մը և սոսկ սեռական կիրքերէ առաջնորդուելով կը ծնի գաղանային մոլուցքներ և քը մահանոյքներ և զանոնք գոհացնելու համար ամէն գնով կ'աշխատի: Աւա՛զ, եթէ կիները իրենց կոչման ծառայած ըլլային հաւատարմօրէն՝ այն ատեն թերեւս աշխարհի թշուառութիւնը պիտի ոչնչանար և մարդիկ որոշ չափով վայելքներու պիտի տիրանային: Երեք բան կայ որոնց հրապոյրը կը գերէ մեղ ամէնքս ալ, կը կախարդէ ամէնէն յամառներն ալ ու այդ երեք բաներն են կին, Դրամ և Փառք: Դրամով կարելի է հասնիլ փառքի և հեշտութեան: Կին, Դրամ և Փառք, ահա ապականուած մարդերու իտէալը: (Էլահան, Տիրան, Աշոտ ներս կը մտնեն հեւալով.)

ՏԵՍԻԼ Փ.

ՀՐԱՆԴ, ՎԱՀԱՆ, ՏԻՐԱՆ ԵՒ ՍՃՈՑ

Երեքը միասին.— Ա՛հ, կորսուած ենք, կորսուած, պիտի բռնուինք ու շղթայակապ պիտի դատուինք անյուշ բերդերը, յանկարծակիի եկանք, ուժերը պատրաստ չեն: Մատնուած ենք....:

Հրանդ.— Ի՞նչ կայ, տղերք, քաջ եղէք, և ըսէք: Երեքը միասին.— Հալածանք, հալածանք, մեզ կը հարցնեն, մեզ կը փնտուեն, և ահա քանի մը վայրկեանէն հոս պիտի հասնին, փախչիլ պէտք է փախչիլ....:

Հրանդ.— Փախչիլ... մենք փախչինք, ոչ արդերք, մենք չպիտի փախչինք, թող գողերը և մարդասպանները փախչին, թող սրիկանները և ոճագործները փախչին, իսկ մենք դադափարականներս անվախ կ'երթանք զնտանները՝ շղթայակապ, մենք ուր որ ալ երթանք՝ ազատութիւնը հետ մեկտեղ կը տանինք: Միթէ բռնութեան քաղաքներն ալ զնտաններու պէս չեն, թող հալածուինք գոնէ մեր դատը կը յաղթանակէ:

Երեքը միասին.— Այո՛, այո՛, թող հալածուինք, գոնէ մեր դատը կը յաղթանակէ:

Հրանդ.— (Հանդարտելով) բնա՞ւ պատրաստութիւն չկայ, սոսկալի բան, ի՞նչ եղան ուրեմն ժողովրդական երեք ուժեղ խումբերը:

Աշոտ.— Պաշարուեցան՝ և յուսահատական կոիւ կը մղեն:

Հրանդ.— Իսկ ազատականները:

Վահան.— Յանկարծակիի եկան, մէկ մասը թշնամիին միացաւ, երկրորդ մաս մը անձնատուր եղաւ, խիստ փոքրիկ մաս մը միացաւ ժողովրդական խումբերուն:

Հրանդ.— Իսկ մենք ի՞նչ պիտի ընենք, միթէ չը պիտի՝ դիմադրենք եթէ մեղ ձերբակալելու գան. պէտք է դիմադրել:

Տիրան.— Մեր կեանքը թանկագին է անխոնեմութեան զո՞յ չերթանք, եթէ սկատահմամբ դիմադրենք ու սպաննութինք մեր նպատակը մեղի հետ մէկտեղ գերեզման կ'իջնէ և կը թաղուի գուցէ քանի մը դարեր:

Վահան.— Հապա ի՞նչ ընել պէտք է:

Տիրան.— Ժամանակ շանկու համար բանտարկուելու է, մինչեւ որ Հրանդի բնակիչները օգնութեան հանին:

Հրանդ.— Այո՛, մինչեւ որ Գիսաւորը գայ, և հաւատացէք որ պիտի գայ ան, այնքան ուժգին է թըշուառութեան աղաղակը, այնքան սրտածմլիկ տառապղներու բողոքը: Տիեզերքի գանկը պիտի խոռվի, բնութիւնը պիտի զարչուրի....:

Աշոտ.— Ուրեմն պիտի երթանք շղթայակապ ու պիտի հաղանդինք ճակատագրին:

Տիրան.— Այո՛, գոնէ առայժմ:

Վահան.— Կը մակաբերեմ թէ յաջողութեան սկայմանը յարմար ժամանակ և յարմար գետին գանելն է: Համակերպինք, ուրեմն, ընկերներ, թող բանտարկին մեզ:

Հրանդ.— Ուրեմն համաձայն ենք ամէնքս ալ, նախզգացումներս յօժար տրամադրութիւններ ցոյց կուտան այս հարկադրութիւնը ընդունելու: (Ուժի ձայներ, եւ աղմուկներ կը լսուին, Ոստիկանապետը զինուրներով ներս կը մտնէ.)

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՈՅՆՔ, ՎԱՍԱԿԻ ԵՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ

Վասակ.— (Հանդի դառնալով) Կոմս Հրանդ Աւատունին դուք էք:

Հրանդ.— Այո՛,

Վասակ.— Յանուն տգիտութեան և բոնապետութեան կը ձերբակալեմ ձեզ: Ձերբակալէ՛ զօրական (ոսմիկամին մէկը կը ուղայէ Հրանդիք)

Վասակ.— Ովե՞ր են ասոնք:

Հրանդ.— Իմ ընկերներս:

Երեքը.— Այո՛, իր ընկերներն ենք:

Վասակ.— Իրեն գաղափարակի՞ց էք:

Երեքը.— Կէտ առ կէտ և կատարելապէս:

Վասակ.— Ուրեմն ոստիկաններ, ձերբակալեցէ՛ք այս մարդիկն ալ: (Կը ձերբակալին)

Հրանդ.— Ի՞նչ է մեր յանցանքը, Պրն. Ոստիկանապես:

Վասակ.— Դուք կը հարցնեք թէ ի՞նչ է ձեր յանցանքը, որքա՞ն միամիտ հարցում:

Զորսը.— Բայց պէտք է ըսէ՛ք մեր յանցանքը, առանց անոր իրաւունք չունիք մնզ ձերբակալելու:

Վասակ.— Իրաւո՞ւնք... թշուառականներ, վազը մահուան պիտի դատապարտուիք և տակաւին իրաւունք կը փնտուէք... խղճալի՛ մտաւորականներ...:

Հրանդ.— Կ'արդիլեմ ձեզ՝ մեզ ծաղրելու և անարդ հեղութեան ևնթարկելու մեր խէլաները: Դուք տղիտութեան վատ գործիքներն էք և կարող էք ամէն կարգի դաւաճանութիւններ ընելու:

Վասակ.— Ահա պիտի ըսեմ ձեր յանցանքը, դուք միութիւններ և ընկերութիւններ կը կազմակերպէք, դպրոցներ, թատրոններ, լուսաններ և ընթերցարան-

ներ կը բանաք, կը գրէք, կը խօսիք և կը գործէք յառաջդիմութեան պահանջները և քննացող ազգերու զարգացումին պատճառ կ'Ալլաք, դուք ստրուկներուն սարուկն էք որ կը ծառայէք անսոնց ձրիաբար և նոյն բակ ձեր անձին կորուստովը:

Զորսը.— Տարէ՛ք, տարէ՛ք ուրեմն մնզ հոն՝ ուր կը կանչէ տղիտութիւնը, որովհետեւ մնաք բնաւ չպիտի հրաժարէնք մեր սկզբունքներէն և գործերէն, չենք սոսկար բնաւ ձեր երկաթներէն և տանջանքներէն, ուրովհետեւ մեր սրտերը ճշմարտութեան զրահը հագած են: Բայց քիչ ատենէն պիտի տեսնէք Գիսաւորի մը գալը և Գիսաւորին հետ ալ պիտի գայ մեր գաղափարները գործադրելու երկնային օգնութիւնը...: (Գիսաւորը հեռուեն կ'Երեւի, փոխփողումներ լսով և փալատակում, սոսկացող աղմուկներ եւ ցնցումներ:)

Վասակ.— (Մարսափահար եւ ոսմիկանները զարնուրած կերպարանի մը կ'առնեն) Այո՛, այո՛, Գիսաւորը... աւա՛զ, Գիսաւորը... ո՛հ, Գիսաւորը...: (Խնդիրներ ծող վելով) մի՛ վախնաք բնաւ, Գիսաւորը լոկ երկնային մարմին մըն է, աճապարեցէք, շուտ ըբէք, կապոյտ բերդը տարէք այս անիծեալները և Գիսաւորը թող գայ:

Երեք ընկերները.— Գիսաւորը, Գիսաւորը... ո՛հ, Գիսաւորը... (Փոխփողում, փալատակում, գոռում, զոյում կը շարունակուին:)

Հրանդ.— (Գիսաւորը ցոյց տալով) հոն, նայեցէք, ընկերներ, Գիսաւորին, ան պիտի գայ կործանելու աըգիտութեան գալը և իմաստութիւնը թագաւորեցնելու աշխարհի վրայ: (Ամենը մէկ սեւեռած աշխարհով կը հային:)

Վարագոյրը կ'իջնէ

Ա. Բ. Ա. Բ. Ո. Ւ. Ծ. Դ.

Վերլուծում. — Բանիք տես արան, դրամի, հետևութեան եւ փառքի դերեր, յարձակում բանիք վրայ, մազական միջոցներ, ահաւոր տեսարան, Գիսաւորին եւ ումբ :

ՏԵՍԻԼ. Ա.

(Տեսարանը կը ներկայացնէ բանիք որան մը, աղօսլոյս, բանարկեալները ոչ բայակապ պառկած են ասդին անդին, խոր լուրիսն կը տրէ, մերբենդմերը ողբաներու ձայներ կը լսուին, նաեւ խորդալու ձայներ, )

Վ.Ս.Ս.Կ ԵՒ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ

Վասակ. — (Վարանումով եւ սարսափահար ներս կը մտնէ, բանիք մը անգամ կ'երեւեկէ սրանին մէջ մազգալ) Երեք օրէ, երեք տաժանելի օրեր որ աղատուեցայ հրաշքով մը՝ ապօտամքներու յարձակումներէն : Բանիք, քանի գնդակներ շնելով անցան քովերէս երբ մեր զինուորները զիտապաստ կ'ինսային նախճիրի ընդարձակ հրաշարակին վրայ՝ մենք ստիպուած էինք ամէն գնով այս չորս գլխաւոր պետքը անշնաս դէպի բանտ առաջնորդել : Խուժանը մոլեգին թափով մը կը յարձակէր և մեր ձեռքէն յափշտակել կ'ուզէր իրեն առաջնորդները. զինուորական հինգ կարգ շղթաներու մէջ առած էինք զանոնք, որոնք աջ ու ձախ մաս կը սփռէին : Վասակաւոր էր մանաւանդ իմ կացութիւնս, որովհետեւ ոչ թէ միայն պարտականութեան ձայնին անսալ պէտք էի այլ և յաղթանակել անսպայման : Հիմա

որ անշնաս ազատուած եմ, գոհ եմ, և պիտի վարձամրուկմ իմ այս թանկագին ծառայութեանս համար : Ահա, ո՛րքան վատ հեգնութիւն, հարիւրաւորներ սպաննել չորս անձեր ազատելու համար : (Պառկողին ուն կը մօսենայ եւ կը դիտէ զանոնի խուզարկու աշենով) Հիմա հանդարա կը քնանան, ճիշդ ու ճիշտ անոնք են, երազական պատրանքի մէջ չեմ : Այս՛, կեանքիս գնով գնուածներն են ասոնք որոնց ողջ և առողջ շղթայակապ բանարկութիւը օրհնութիւն մը եղած է ամբողջ երկրին համար, որովհետեւ եթէ ազատ ըլլալին՝ խրոխա ջոկատներու առջեւ ինկած պիտի խիզախէին և անընկճելի թափով մը պիտի գրաւէին բանապետական բոլոր կալուածները և տղիտաւթեան դրօշը տապալելով՝ վերչնականապէս պիտի կանգնէին Ազատուրեան կարմիր դրօշակը : Մհանակ այն ատեն երեւակայեցէք որ բռնապետական շունչ մ'իսկ չպիտի ապրէր և ես ալ ուրիշներու հետ մահուան քունը պիտի քնանայի : Հիմա որ կենդանի եմ՝ կեանքիս արժէքը լաւ գիտեմ, պաշտօնիս մէջ պիտի բարձրանամ և հակայի անուն մը պիտի ձգեմ աշխարհիս վրայ : Բայց տակալին ընելիք գործեր կան . պէտք է որ մօտէն հոկեմ այս նշանաւոր բանարկեալշներուն վրայ մինչեւ որ գայ այն երջանիկ օրը երբ իմ ձեռքովս պիտի կատարեմ դահճապետի պաշտօնը ու պիտի կախեմ այս վատ իմաստունները : (Մտածկոտ կը ձեմէ) : Ահա հարցաքննիչ դատաւորը պիտի գայ և պիտի հարցաքննիչ զանոնք իմ ներկայութեանս, ո՞հ, ո՛րքան ուրախութեամբ պիտի տեսնեմ անոնց սարկանալը : (Դուռին կը մօսենայ, ոտքի ձայներ կը լսուին) Ահա եկաւ : (Սուրեն զինւորի մը առաջնորդուրեամբ ներս կը մտնէ պայուսակով մը .)

## ՏԵՍԻԼ Բ.

ՎԱՍԱԿ, ՍՈՒՐԵՆ ԵՒ ԶԻՆԻՈՐ

Սուրէն.— (Ներս մՏնելով) մ' ոք է Պրա. Ռատիկաւ նապեալ:

Զինւոր.— Հոս, բանտարկեալներուն քով կը հսկէ:

Սուրէն.— Սպահով ես թէ հոս է, եթէ ոչ գնա՞ կանչէ:

Զինւոր.— Հիմա պիտի տեսնէք զի՞նքը:

Վասակ.— Տէ՛ր դատաւոր, շատ ճշգաղաւ էք, ես ալ ձեզի կը սպասէի: (Զինւորը կը մեկին)

Սուրէն.— Մնտարակիյս... կարծեմ թէ արդարութեան պաշտօնեայ եմ... և կարգազահութեան նախանձախնդիր:

Վասակ.— Ձեր մեծութիւնը կը վայելէ արդէն այն պիսի կարեւոր համբաւ մը որուն արժանի է ամէն կերպով:

Սուրէն.— Ո՞չ կատարելապէս, սակայն պիտի ջանանք որ մեր պարտաճանաչութեամբ արդարացնենք այդ համբաւը:

Վասակ.— Խրաւունք ունիք, խնդրեմ քիչ մը հանգչեցէք:

Սուրէն.— Բայց կարծեմ թէ ամբասատանեալները կը նախ ամսիջապէս հարցաքննել, այնպէս չէ:

Վասակ.— Հարկաւ և շատ զիւրութեամբ:

Սուրէն.— Ո՞ւր են արդեօք, կրնա՞ք ըսել:

Վասակ.— Հոս են, ահաւասիլ:

Սուրէն.— (Յոյց տալով) ասո՞նք են մշնդէ, ուրեմն արթնցնել պէտք է:

Վասակ.— Իմ կարծիքով անոնցմէ մէկը միայն

արթնցնելու է առայժմ, յետոյ երկրորդը եւ յաջորդաբար:

Սուրէն.— Ի՞նչ անպատեհութիւն կայ եթէ չորսը մէկէն արթնցնենք:

Վասակ.— Շատ մը անպատեհութիւններ կան, միւս կողմանէ առանձին առանձին հարցաքննելը օրինաւոր է:

Սուրէն.— Բայց մենք անպայման պիտի դատապարտենք զանոնք, և արդէն գալարնապէս միթէ չե՞նք դատապարտած, Այս հարցաքննութիւնը զոր պիտի կատարեմ՝ ձեւակերպութիւն մըն է:

Վասակ.— Եւ սակայն ձեւակերպութիւնն ալ պէտք է օրինաւոր ըլլայ՝ պատասխանատուութիւն չհաւելիելու համար մեր վրայ:

Սուրէն.— Արդարացի է, ուրեմն կրնաք արթնցընել մէկը:

Վասակ.— Ո՞րը նախ արթնցնել պէտք է:

Սուրէն.— Անշուշտ, նախ պարագլուխնին:

Վասակ.— Շատ լաւ, (Կը մօսենալ Հրանդին եւ ոսքովը զամնելով) ե՛լ, ե՛լ չարագործ, ոտքի ել:

## ՏԵՍԻԼ Գ.

## ՆՈՅՆՔ ԵՒ ՀՐԱՆԴ

Հրանդ.— (Այս մը արքնեալով) ի՞նչ կայ, հէ՛, ի՞նչ կայ...:

Վասակ.— Հարցաքննութիւն... ահա հարցաքննինին դատաւորը եկած է և ձեզ պիտի հարցաքննէ:

Սուրէն.— Այս, այս շուտ ըրէ, ժամանակ չունիմ, չեմ կրնար երկար ատեն սպասել, այս ի՞նչքան

անտարբերութիւն, բաղում չարագործութենէ վերջ ար հանդիսա քնանաւլ...:

Վասակ.— Սյդ ալ քաջութիւն մը կը համարեն, տէր դատաւոր:

Հրանդ.— Եթէ դուք հարցաքննութեան եկած էք, կրնաք հարցաքննել, եթէ ոչ մեր անձնականովը զբարելու իրաւունք չունիք:

Սուրէն.— Պարո՞ն ամբաստանեալ, այդ յանդուդն խօսքերուն ժամանակը անցած է այլ եւս, չէ՞ք տեսներ ձեր շղթաները, հոս բանտի մէջ ենք ուր գերիները չեն կարող հրամայել:

Հրանդ.— Եւ ոչ ալ հարցաքննիչ դատաւորները կարող են նախատանքով իրամայել:

Սուրէն.— Շատ կը սխալիք, մենք ոչ թէ միայն դատելու պաշտօնեայ ենք, այլ եւ հրամայելու և եթէ շարունակէք այդպէս խօսիլ՝ խարազանել կուտամ ձևկ:

Վասակ.— Զնապանդի՞ք, պարո՞ն, տէր դատաւորին հրամաններուն, համբերութիւնս կը համանի պիտի աստակեմ:

Հրանդ.— Ես պատրաստ եմ պատասխանելու իր օրինական հարցումներուն, բայց երբեք չեմ կրնար հանդուրժել սարկարար իր ծրի անարգանքներուն և անվը ձիռ նախախնքներուն:

Վասակ.— Տէր իմ, զառանցինքի մէջ է, ան տակաւին ինքզինքը ապարանքին մէջ կը կարծէ, ներել պէտք է զառանցողներուն:

Սուրէն.— Բայց և այնպէս բանաը յիմարանց չէ, և ես իմ դատաւորի հանգամանքովս չեմ կրնար ներել երբեք այսպիսի ըմբռատի մը որ կը համարձակի չնաշղանի արդարութեան պաշտօնեային:

Վասակ.— Կէտ առ կէտ ճշմարիտ են ձեր դիտութիւնները, բայց առայժմ խնդրեմ որ ներողամբա գտնուիք:

Հրանդ.— Ես ո և է կերպով ձեր դէմ անհնապանդ

և ըմբռատ չեմ գտնուած, դուք կրնաք սակայն ձեր քմահաճոյքին համեմատ ենթալրել, մանաւանդ որ տը զայական է այդ տեսակ եղակացութիւն մը:

Սուրէն.— Շատ լաւ, պատասխանեց՛ք ուրեմն, պարոն ամբաստանեալ, (Պայուսակը կը բանայ, բուղբերը կը հանե եւ կը սկսի գրել) ի՞նչ է անունիդ:

Հրանդ.— Կամս Հրանդ Ամատունի:

Սուրէն.— Աստիճանո՞վ կամս թէ անունով:

Հրանդ.— Ցեղական ժառանգութիւնով:

Սուրէն.— Ուրիշ անուն ունի՞ք:

Հրանդ.— Ո՛չ:

Սուրէն.— Քանի՞ տարեկան էք:

Հրանդ.— Երևոսուն տարեկան:

Սուրէն.— Ամուսնացա՞ծ էք:

Հրանդ.— Ո՛չ տակաւին:

Սուրէն.— Նշանուած էք:

Հրանդ.— Ո՛չ:

Սուրէն.— Սիրահար ունի՞ք:

Հրանդ.— Ես բնաւ մէկը չեմ սիրած այդ տեսակտով:

Սուրէն.— Բարեկամ կին կամ օրիս՞րդ ալ չունիք:

Հրանդ.— Կրնամ ունեցած ըլլալ կամ՞ ոչ:

Սուրէն.— Ինչո՞ւ կը խուսափիք:

Հրանդ.— Ժամանակառ չըլլալու համար.

Սուրէն.— Միտք չունի՞ք ամուսնանալու:

Հրանդ.— Բնա՛ւ երբեք:

Սուրէն.— (Մէկուսի վասակին) ան է ան, հասկըցայ, (Բարձրեն) ինչո՞ւ համար չէք ամուսնացած:

Հրանդ.— Ժամանակ չունեցայ ատոր վրայ խորհնելու:

Սուրէն.— Հապա ի՞նչ բաներու վրայ խորհնելու ժամանակ ունեցաք:

Հրանդ.— Զարգանալու և մարդոց ծառայելու:

Սուրէն.— Ի՞նչ տեսակ ծառայութիւն է այն, ապա-

սաւորութիւն ըսել կ'ուզէք. եթէ այդպէս է զարգաւալու պէտք չունէիք կարծնու:

Հրանդ.— Ժողովուրդը լուսաւորելու և իրեն իրաւունքին տէր դարձնելու:

Սուրէն.— Ուրեմն դուք ժողովրդակա՞ն էք:

Հրանդ.— Այս՛:

Սուրէն.— Հապա ի՞նչպէս «կոմս» էք, ծիծաղելի չէ միթէ:

Հրանդ.— Ես ինքզինքս ճանչցնելու համար է որ «կոմս» կ'ըսեմ իմ անձիս քանի որ այդ անունով միայն կը ճանչցուիմ. պաշտօնական տիտղոսներէ չեմ ախորժիր:

Սուրէն.— Ուրեմն դուք ընկերվարակա՞ն էք:

Հրանդ.— Անոր պէս բան մը:

Սուրէն.— Ի՞նչ էք ուրեմն ճիշդ և ճիշդ:

Հրանդ.— Սրմատական ամէն բանէ առաջ:

Սուրէն.— Թշուառական, արմատական հէ... և ի՞նչ բանի արմատական:

Հրանդ.— Երկիրը հիմէն բարեկարգելու տեսակէտով:

Սուրէն.— Եւ միթէ բարեկարգ չէ երկիրը:

Հրանդ.— Բնաւ երբե՛ք:

Սուրէն.— Դարձեալ կը զառանցէք, ինքզինքնուդնէք, պաշտօնական քննութեան ատեն պէտք չէ որ այդպէս անպատկառ գտնուիք:

Հրանդ.— Բսել է ձեր հարցումներուն պատասխանելու ազատութիւն ալ չունինք, ուրեմն լսել հարկ է:

Սուրէն.— Կը լսէ՞ք, տէր Ոստիկանապետ, իմ դէմս ալ կ'ըմբռուսանայ:

Վասակ.— Դարձեալ կը կրկնեմ թէ պէտք է խորուն, կը հասկնա՞ք, եթէ ոչ խարազանը պիտի գայ:

Հրանդ.— Այս անգամ դուք կը զառանցէք, իրաւասութիւն չունի՞մ միթէ ըսելիքներս ըսելու. ես վստան եմ որ բռնութեան և ագիտութեան աիրապետութեան տակ ծայրայել թշուառութեան մէջ կը հեծէ մարդկութիւնը՝ որուն ամենամեծ հաստատութիւններն են բանտերը, բնրդերը, զօրանոցները և անկելանոցները, ամենալաւ պաշտօնեաները՝ զէնքի, իշխանութեան և վճռի պաշտօնեաներն են....

Սուրէն.— Այս անգամ զառանցանքը հայնոյութեան վերածուեցաւ, վերջը կը զգչաք, առայժմ շարունակենք. դուք հարստութիւն չունի՞ք:

Հրանդ.— Ունի՞մ:

Սուրէն.— Ինչո՞ւ ուրեմն պուռժուա չէք եղած:

Հրանդ.— Անոնց հակառակ ըլլալուս համար:

Սուրէն.— Դուք անոնց հակառակելով ի՞նչ կը շահիք, չէ՞ք դիտեր մրթէ որ անոնք զօրաւոր են և կատող են ձեզ ամբաստանու, և գատապարտել տալ:

Հրանդ.— Այդ ամէնը զօրդելու կարող են և աւելին ալ:

Սուրէն.— Զէ՞ք ուզեր օգուուիլ ձեր հարստութենէն, հարստութիւնը զօրութիւն է:

Հրանդ.— Բնա՛ւ երբեք, զրամին չեմ կարող ծառայել:

Սուրէն.— Կալուածներ ունի՞ք:

Հրանդ.— Պէտք եղածէն աւելի:

Սուրէն.— Կը ցաւիմ ձեր վրայ ստուգիւ որ պարագ գաղափարներու համար կը հրաժարիք վայելքներէ:

Հրանդ.— Հասարակութիւնը լուսաւորելու գաղափարները թանկագին գանձեր են:

Սուրէն.— Ես ձեզի խորհուրդ կուտած որ ետ կինաք ձեր այդ դարավերջիկ, վեսասկար սկզբունքներէն. Խողովո՞ւրդը ով է, անոնք պարզ հպատակներ են, դուք իշխողի հանգամանք կրնաք ունենալ և օգտակար ըլլալ դարձեալ:

**Հրանդ.** — Զեր խորհուրդները աւելորդ են ինձի համար, ընդհակառակը ես ձեզի խորհուրդ կուտամ որ բանութեան գործիք չըլլաք և աղատագրուիք, այն ատեն թերեւս ձեր խորհուրդները յարգուելու բնոյթն ունենային:

**Սուրէն.** — Ծեղուժ կայ, մեծ շեղում, տեսակ մը հիւանդութիւն է ասիկա, գաղափարական հիւանդութիւն: Աշխարհը բարեկարգել հէ... ի՞նչ արգահատելի նշանաբան, միթէ աշխարհը կրնայ կատարելապէս բարեկարգուիլ:

**Հրանդ.** — Անմրջապէս, միայն թէ՝ բարեւ արգողներ ունենալու է:

**Սուրէն.** — Զեր ընկերներն ալ հարուստ են:

**Հրանդ.** — Դուք անարժէք հարցումներ կ'ընէք, մեր ընկերները աղքատ չեն, թերեւս հարուստ ալ են, ատով ի՞նչ եղած պիտի ըլլայ:

**Սուրէն.** — Կ'ուզեմ ձեր վիճակը հասկնալ, դուք պարտաւոր էք միայն պատասխանելու, հարկաւ պէտք է հասկնամ ձեր նիւթական վիճակը, որովհետեւ երկրի վրայ նիւթականէն կախում ունին գործերը:

**Հրանդ.** — Դատաւորի պաշտօնը արդարութեան դաշտոն է լոկ և ո՛չ աւելի, մեր անձնական հաւատութիւնով զբաղելու պէտք չունիք՝ չվայելեր ձեզի:

**Վասակ.** — Պարո՞ն, դուք չէք գիտեր թէ աէր դատաւորը իշխանութիւն ունի ձեզի աղատութիւն տաւու անմրջապէս՝ եթէ իր յոգնութիւնները ձեւով մը փոխարինել գիտնաք:

**Հրանդ.** — Եթէ յանցաւոր մէկը ըլլայի, թերեւս իրաւունք պիտի ունենայիք ինձի այդպիսի առաջարկ մընելու, բայց քանի որ յանցաւոր չեմ, ի՞նչպէս կը նամ արդարութիւնս դրամով գնել:

**Սուրէն.** — (Հրանդի մօտենալով եւ ձեռքի բոնելով) դուք աղնուական կոմս մը կ'երեւնաք, ներնցէք իմ

ախալներուս, թիւրիմացութիւն մը կայ գործին մէջ... այնպէս չէ, տէր Ոստիկանապետ:

**Վասակ.** — Ի հարկէ այնպէս է... կամաց կամաց իմ ալ համոզուիլս կուգայ կոր որ պարոնը անմեղ է... վերջապէս ամէն բան իր կամքէն կախում ունի, կամ դատապարտուիլ կամ աղատուիլ:

**Հրանդ.** — (Մեկուսի) ակարանալը վատ է, տեղի տալ պէտք չէ, սակայն ժամանակ չահելու է (բարձաձայն) կատարելապէս անմեղ եմ, պարո՞ններ: (Դատաւորը կ'առնէ վրսակը եւ ֆիչ մը անդին մեկուսի կը խօսին):

**Սուրէն.** — Ցետաձգել պէտք է կրնայ ըլլալ որ համոզուի և խոշոր գումար մը տայ մեզի:

**Վասակ.** — Եթէ ասանկներէ չշահինք հապա որոնց մէջ պիտի չահինք, գրպանները պարապ են:

**Սուրէն.** — Բայց Գաղանի լրտեսութիւնը խիստ հըրամաններ զրկած է ծանր ամբատանութիւններով, պատախանատու ենք:

**Վասակ.** — Հոգդ մը ըներ, ես կրնամ զայն ձեւով մը խարել և գործը յետաձգել քանի մը օրուան համար:

**Սուրէն.** — Ոյս պարագային յանձն կ'առնեմ, բայց չըլլայ որ քիթը հոտ առնէ, եթէ ոչ մեր յայսը ի գերեւ կ'եւս բարորովին:

**Վասակ.** — Կատարելապէս կը վստահացնեմ քեզ, այս տեսակ պատուական առիթ մը ձեռքէ մի փախցըներ:

**Սուրէն.** — Շատ լաւ, ուրեմն երեք օր յետաձգում: (Մօտենալով Հրանդին բարձեկն կ'ըսէ) նկատենով որ ձուք և ձեր ընկերները թէ ձերբակալուելու և թէ բանդուք պիտի ընկերներ չդիմանալով անօւնալ վիճակ մը կը ներկայացնէք և թէ այդ վիճակին մէջ իրաւագիտապէս կարելի չէ վաւերական հարցաքննութիւն մը կատարել, հետեւաբար ձեր հարցաքննութիւնը յետաձգուած է երեք օրուան համար:

Վասակ.— Իրաւունք ունիք, թող քիչ մը հաճախ չեն և ինքզինքնին գտնեն։ Մենք արդարութեան պաշտօնեայ ենք և պարտաւոր ենք այս բաները նկատողութեան առնելու։

Հրանդ.— Ազատ էք, արդէն այսուհետեւ հոս ենք միշտ։

Սուրէն.— Մնաք բարով, մի մոռնաք մեր առաջարկը։ (Սուրէն եւ վասակ կը մեկնին։ Վահան կ'արքնեայ եւ աշխերը ժիկելով կը յօրանցէ։)

### ՏԵՍԻԼ Ա.

#### ՀՐԱՆԴ ԵՒ ՎԱԶԱԿ

Վահան.— Բնկեր, ինչո՞ւ արթուն նստած ես, ի՞նչ կը մտածես։

Հրանդ.— Եկան արթնցուցին, բան չեմ մտածեր։ Վահան.— Ո՞վ արթնցուց։

Հրանդ.— Չլսեցի՞ր, Ռստիկանսապետն ու հարցաքնիչ դատաւորը։

Վահան.— Ուրիմն հարցաքննեցի՞ն քեզ։

Հրանդ.— Խեղկատակ բաներ մը ըրին. մարդիկները կաշառք կ'ուղեն հասկցա՞ր, և իրաւունք ունին որովհետեւ անօթի են։

Վահան.— Է՞ս, կաշառքով ի՞նչ պիտի կրնան ընել։

Հրանդ. Մեզ անմեղ պիտի հռչակեն և պիտի արձակեն։

Վահան.— Յանձն առի՞ր կաշառք տալ։

Հրանդ.— Ժամանակ շահեյու համար համար անտարբեր մնացի. կարելի՞ է միթէ տեղի տալ. նկարագրի գէմ է հաշառելը. իրենք իրենց խաղ մը ըրին ու գացին։

Վահան.— Կատարեալ կատակե գութիւն մը խաղացեր են, բայց մասամբ լաւ եղած է ժամանակ շահելու համար։ (Պայրումներ, որուումներ, լրս եւ փայլատակում, Աօնս եւ Տիրան կ'արքնեան սոսկումով։ Դրամապահութեան Ոդին ներս կը մտնէ եւ իբրև քեանտարկեալները չտեսնելով։)

### ՏԵՍԻԼ Ե.

#### ՆՈՅՆՔ ԵՒ ՈԳԻ

Դրամա զաշտութիւն. — Ոսկիներու տիրապետութիւնը իշխանութիւն ունի երկրի բոլոր ուժերը ծախուառնելու, բարոյական և փիզիքական բոլոր ուժերը։ Ո՞վ հողածիններ, համակերպեցէք Տգիտութեան պատգամներուն և ահա պիտի շառաչեն ձեր առջեւ ոսկիներու տարափները (ոսկիներ կը ցանի) ու ձեր մանկանցու կնանքը անոնցմով հէշտառէտ պիտի ըլլայ։ (Բանտարկեալներուն գառնալով) կը ճանշնամ ձեզ, ո՞վ երկրի անցաւոր ճամբորդներ, դուք երիտասարդներ էք և գերեզմանը տակալին շատ հեռու է ձեզմէ։ Դրամին ուժը պէտք է զօրավիր ըլլայ ձեզի որ թշուառութեան չհանդիպիք։ Ահա պիտի բանամ ձեր առջեւ ոսկիներու անտեսանելի գանձարանը և ձեզ պիտի գոհացնեմ, մրայն թէ պէտք է հնաղանդիք Տգիտութեան և Բանապետութեան կանոններուն։ Համաձա՞յն էք, պատասխան տուէք։

Հրանդ.— Մենք զրամի պէտք չունինք, աւելորդ են մեզի համար ձեր այդ անիմաստ յայտարարութիւնները։

Վահան.— Մենք չենք կրնար կաշառուիլ վատաքար և ծախել մեր սկզբունքներն ու գաղափարները։

Տիրան. — Եթէ դուք այդքան շատ ոսկիներ ունիք, գացէք և երկրի թշուառութիւնը վերցուցէք, դուք որ առաջին պատասխանատուն էք:

Ոգի. — Ուրեմն կ'արհամարհէք ոսկիներու ամենակարող զօրութիւնը որ ջիղն է քաղաքակրթութեան: Պատրանքով մի օրորուիք, առիթը կը փախչի ու բաղդը կ'աներեւութանայ, վերջին զղջումը անզօր կը մընայ: Ահա երկրորդ անգամ կը հրաւիրեմ ձեզ որ անսաք երկնային պատգամներուս:

Աշոտ. — Մենք՝ մեր աշխատութեան և քրտինքի արդիւնքը մեր ձեռքէն յափշտակուած տեսնելով հանդերձ՝ չենք կարող վատարար կաշառուիլ ուրիշներու աշխատութեան և քրտինքի արդիւնքը կազմող ոսկիներով, զղուելի է ձեր առաջարկը, դուք որ չար ոգի մըն էք և պատճառ եղած էք երկրի վրայ ոսկիի անունով դործուած բոլոր վատութիւններուն:

Ոգի. — Դուք խելագարներ էք ուրեմն որ կը յանդէնիք պաշտուած ոգիի մը դէմ ըմբոստանալու և անարգելու ոսկիներու բարեղործ տիրապետութիւնը: Սակայն, դարձեալ պիտի ներկի ձեզի եթէ միայն երկրի վրայ հաստատուած բոնակետական կարգերը յարգել գիտնայիք՝ արժանապէս:

Հրանդ. — Դուք անպատկառ ոգի մըն էք խաւաթէն ծնած, և աշխատած էք դարերէ ի վեր դժբաղդութեան որոններ սերմաննել երկրի վրայ: Հեռացէք, հեռացէք այս տեղէն ու մեր շղթաները ու մեր տառապանքները մի հեգնէք:

Վահան. — Դուք ոճիրներէ ծնած անարդարութեան նշանաբան էք որ բարիք կ'ընէք վատերուն՝ թալլուած ու հարստահարուած ժողովուրդին հարստութիւնսվը: Կորսուեցէք այս տեղէն, և՝ մեր սրտին և՛ մեր երկրն աւերակները մի հեգնէք:

Ոգի. — Ուրեմն պիտի չարչարուիք, պիտի տանչ ջուիք: ձեր շղթաները ա՛լ աւելի պիտի ծանրանան և ազատութիւն չպիտի վայելէք բնաւ: անիծուած և անպիտան գաղափարականներ: (Կը մեկնի)

### ՏԵՍԻԼ Զ.

### ՆՈՅՆՔ

Տիրան. — Լուր մը չառինք դուրսէն, ո՛րքան դըժքաղդ ենք:

Աշոտ. — Մարկ ըրէ, խուլ թնդիւններ կը լսուին, հրացաններու և ուուժերու աշխատական են, այնպէս կ'երեւի թէ ապստամբութիւնը զավուած չէ:

Տիրան. — Մէկը չամարձակիր մեզի այցելել, այս չորրորդ օրն է:

Հրանդ. — Բանտին մուտքը խստիւ արգիլուած է, ամէն տեղ պատերազմական վիճակ հրատարակուած է, ապստամբութիւնը կը շարունակուի:

Վահան. — Լուր տոննելու համար միջացներ կան, քայլը մնաք չենք զիջանիք: Վատութեան երկրին մէջ յաջողելու համար վատութիւն ընել պէտք է և մենք չպիտի ընենք:

Աշոտ. — Ժողովուրդը մեր յուսացածէն աւելի բուռն կը կուտի, հիանալի էին մանաւանդ մեղ աղատելու գիւցանութիւններ էին: Կեցցէ՛ ըմբոստ ժողովուրդը:

Ունչնքը. — Կեցցէ՛ ըմբոստ ժողովուրդը: (Պայրումներ, որոնումներ, լոյս եւ փալլատակում, Հետամոլութեան նդին ներս մնենլով)

ՏԵՍԻԼ. Ե.

ՆԱՅԵՐ ԵԼ ՈՂԻ

Ողի. — Անցայ դրամապաշտութեան հետքերուն վրայէն և ուր որ յաջողութիւններ ունեցաւ ան՝ ես ալ յաջողեցայ, ուր որ անյաջողութեան հանդիպեցաւ՝ ետքանացի յաջողիլ: Աչա երկրային քաղցրութիւնները և հեշտութիւնները առատորէն կը բաշխում ձեզի և խըտ բութիւն չեմ ըներ բնաւ: Գեղեցկութեան հրապոյրը կը սրսկեմ երկնային ցողի պէս մարդկերուն վրայ որպէս զի ախորժ զգան և վայելեն կեանքը: Գութ ու գորով, սէր Դուք փոխանակ երկրի գեղեցկութեան անձանութիւնը անշակելու կը հեծէք այս վատառողջ բանտերուն մէջ: Անձնատուր եղէք սեռական կիրքերու և բնական հանցքներու՝ որպէս զի երջանիկ ըլլաք:

Վահան. — Միրոյ և հրապոյրի պէտք չունինք, մննք իմաստութեան և ճշմարտութեան թելարրութիւններուն միայն կը հապատակինք, իսկ ձեր խենէշ յայտարարութիւնները զգաւանքով կ'անարգենք:

Հրանդ. — Դացէք տգէանները և յիմարները հրապուրեցէք, մենք ձեր նենդութիւններուն անձնատուր չենք կրնար ըլլալ, մսի և սոկորի սէրը ամենազազիք սէրն է մեղի համար:

Ողի. — Ապուշներ, մտիկ ըրէք վայրկեան մը և պիտի համոզուիք թէ ես վասմ ձիրքերու և զգացում ներու հրամայելու իշխանութիւնը ունիմ, հեշտագրդիւ յափշտակութեան վայրկեաններ կը շնորհեմ մահկանացուներուն, անմահական վայրկեաններ: Ո՛վ կիրքերու զաւակներ, ձեր ախորժակները վայելելու համար պէտք է անյապաշտ կատարէք բնութեան հրամանները և ոչ թէ

այդպիսի կեղծ բացարութիւններ տալով ճշմարտութիւնը ծածկէք: Եթէ դուք բարոյական գեղեցկութիւններն ու կատարելութիւնները կը սիրէք պարտաւոր էք միեւնոյն ատեն ֆիզիքական գեղեցկութիւններն ու կատարելութիւններն ալ սիրելու: Որովհետեւ առաջինները վերջիններէն կը ծնին. Ֆիզիքականը մայր է ամէն բարիքներու, կիրքերը չեն կրնար զսպուիլ, անոնք այս կամ այն կերպով կ'արտայայտուին անպատճառ: Դուք կը կեղծէք պարզապէս:

Տիրան. — Մենք ամէն կարգի մոլութիւններէն հրաժարած ենք և չենք կարծեր որ մեր կիրքերը իրենց բնական հակումով և օրինաւոր գոհացումով՝ մոլութիւններ կազմեն: Ո՛չ, Դուք անոնց չափազանցութիւնը թիւններ կազմեն: Դուք անոնց չափազանցութիւնը կ'ուայսինքն ոչ-բնականութիւնն է որ կը քարոզէք և կ'ուայսինքն ոչ-բնականութիւնը միզէք որ կիրքերով միայն զբաղինք: Մեզի համար միզէք ուղղութիւնը ուղիղ ճամբէն գուրա հանողը, դուք չէք միթէ մարդկացը նպատակ չկրնար ըլլալ, դուք չէք միթէ մարդկացը նպատակ չկրնար ըլլալ, միթէ մարդկարգներ, հեշտական կիրքերուն գերի ըրած էք դասակարգներ, և ամբոխներ, հեռացէք այս տեղին և մեր զայրոյթը մի հեգնէք:

Աշոտ. — Դուք կնոջ սորվեցուցած էք խարել, կեղծել, դաւել, նենդել և ամէն ինդրի մէջ մատ խառնել և բոլոր ընկերական հարցերու մէջ իր մսին և ոսկորին համը գնել՝ որ կ'աշխատի ամէն գնով՝ պոռնկութեան համը գնել՝ միթէ մարդկարի ինդրի: Ա՛՛, բարենապատ լուծել տալ գրեթէ ամէն ինդրի: Ա՛՛, բարենապատ լուծել տալ գրեթէ ամէն ինդրի: Պիզծքերու ապականութեան, նկարագրի ինկանութեան Պիզծքերու միզէք համար միթէ, մենք կը ճանչնանք ձեզ, հեղին դուք չէք միթէ, մենք կը ճանչնանք ձեզ, հեղին դուք չէք միթէ, մենք կը ճանչնանք ակըզացէք, ո՛չ, հեռացէք և մեր աղատազրական ակըզացէք:

Ողի. — Ուրեմն տառապեցէք, և ձեր շղթանները թող աւիլի ամբանան, ձեր կեանքը չարչարանքներով թող հիւծի, հառաչել ու լալ թող ըլլայ մրոյն ձեր թող հիւծի, հառաչել ու լալ թող իմ վրէմս, դուք գեղեցկութացինը, ալ թող լուծուի իմ վրէմս, դուք գեղեցկութացինը, անպայլ անպատեցիք, անպայլ և չրապոյրի Մայրը անպատեցիք:

անսիրտ էակներ : Սակայն դարձեալ պիտի ներէի ձեզի եթէ միայն Տգիտութեան հրամանները կատարելու խոստումը տայիր ինձի , այն ատեն ձեր շղթաները պիտի իշնային եւ ալ շարունակ աղատ ու երջանիկ պիտի ըլլայիք :

Վահան.—Մենք ձեզի պատասխանելու իսկ չենք գիշանիր, բայց հարուածել պէտք է ձեզ՝ որ դառնութիւն եւ ախտաւորութիւն կը սրսկէք ամէն կողմ որ թունաւոր զգացումներով վարակած էք մարդկութիւնը։ Գացէք այս տեղէն և մեր զգացումներն ու իտէալները մի՝ հեգնէք։

Ոգի .— Անարժանաւոր , ահա ևս կ'երթամ վիրաւորուած զգացումներով , որւժետեւ դուք չեք կարող նամանդամներու սեղանին մասնակիու :

Հրանդ. — Քիչ ատենէն ձեզի ցոյց պիտի տանք մեր արժանիքը, կոխւը սկսած է արդէն ձեր տիրապետութեան դէմ: Ցեղերը հասկցած են այլ եւս թէ որ լիմիկ թռնաւոր վիշապներ էք Դուք և Դրամապաշտութիւնը, խաւար Տգիտութեան յաջողելու ստորին միջոցները: Մենք չենք կրնար ծախութիւն սրաով և հօգիով, մնեք մեր անձին տէրն ու իշխանը պէտք է ըլլանք անդադար: Հեռացէ՞ք այս տեղէն և մեր ազատութիւնը և մեր անկեղծութիւնը մի՛ նախատե՞ք:

Ողի. — (Հերանալով) խելագար յիմարներ, ապուշաստառներ, (կը մեկի)

S T U D I E S .

Tunisia

Աշոտ. — Եվ արիւնոտ ժողովուրդ, քու դատի սուրբ է և նույիրական։ Մենք վիրաւոր սիրտերով միշտ հաւատարիմ պլախ մնանք քու դատին, ալ պլախ

Է որ դուն անպայման աղատագրուիս, ահա շղթանիբը  
մերն են և բանտերը ամենուս : Սուրբ, կրակը, տառա-  
պանքը և մահը չեն որ պիտի կրնան յաղթել մեզի, այլ  
նշարագրի վատաւթիւնը և բարոյականի ինկածութիւնը :

Տիրան .— Մինչեւ հմա , դարերու ընթացքին ,  
ազգերու արիւնը հեղեղանման վազեց և ոռոգեց երկ-  
րագունդը՝ յետաղիմսութեան և մալութիւններու համար ,  
այսունհետեւ ալ թող վազէ յառաջդիմութեան և ազա-  
տութեան համար : Արիւնը կեանքի հեղուկն է , և ծըշ-  
մարիտ սկզբունքներու և գալափարներու անարգել  
վազէ :

Հրանդ . — Ի՞նչ կ'ուզեն այս դաւաճան ոգիսները  
մեղմէ, գարը, եթէ էակներ :

վահան. — Կ'ուզեն գնել մեր նկարագիրը և կաշ-  
կանդել մեր ուղեղը եւ մեզ բարոյապէս գերիներ եւ  
ստրուկներ ընել, ի՞նչ անպատճառ համարձակութիւն.  
(Պայքումներ, որումներ, լոյս եւ փայլատակում, փա-  
ռամուրեան ոգին ներս կը մտնե ձեռքը պակներով.)

S U B H I T

ԱՐՅՈՒԹ ԵՒ ՌԴԻ

Ոզի. — Գիտեմ, շատ ու շատ սպասեցիք. կը գը-  
նահատեմ ձեր համբերութիւնը, ա՛յ եկայ: Բազում  
զբաղումներ ունեի, մարդկութիւնը փառքի եւ երջան-  
կութեան գոյներովը կը ներկեմ, մեծութիւններ եւ պաշ-  
տօններ կը բաշխեմ ձրիաբար, չնորհքներ եւ պարգևե-  
ներ կը ցրուիմ առանց փօխարինութեան: Մարդիկ թող  
մեր չնորհիւ կեանք վարեն եւ թող գոյնանան իրենց  
փառախիսութիւններուն մէջ: Դուք ալ, սիրելի էակ-

ներ, դուք ալ պէտք ունիք, մեծութեան ևւ փառքի, պէտք է որ հաճութեամբ լսէք իմ հրաւէրներս, ևս ամէն բան եմ ևւ ամէնը կարող եմ տալ: Փառքի աիրապեառթեան վերին իշխանն եմ, ահա ինչ որ կ'ուզէք եւ ինչ որ կը փափաքիք պիտի տամ ձեզի՝ անմահութեան միակ պատգամաւորը, լիազօր իր բոլոր ձեռնարկներուն մէջ, Եկէք որ պահկեմ ձեր ճակատները այս անթառամ պսակներով և ձեզի մեծամեծ պաշտօններ, ոսկիներու առատ գումար մը, գեղեցիկներու չքանալ ընկերութիւն մը ու այն ամէն քաղցր հաճոյքները որոնցմով միայն մարդ երջանիկ կրնայ ըլլալ: Օ՞ն, աճապարեցէք, ևս ձերն եմ, ևս աշխարհինն եմ: Անգործութիւնը չեմ սիրեր, առաքինութեան վեհագոյն ոգին եմ ևս, բարերարելու միայն բարերարել, ահա այս է իմ բուն նպատակս:

Հրանդ.— Ուրեմն դաշէք և թշուառ մարդկութեան բարերարեցէք՝ եթէ իրօք անկաշառ և անկողմնակալ էք: Սակայն գիտեմ թէ դուք միայն մասնաւորները կաշտոելու համար է որ փառք պատիւ և վայելք կուտաք ու երբեք չէք աշխատիր լնդհանուր չքաւորութիւնը և սրտմաշնչները վերցնելու:

Ոգի.— Օ՞ն... օ՞ն... աւելորդ խօսքեր կ'ընէք ձեր բարերարին դէմ, ուրբմն ապերախտ էք, վայ ձեզի որ բաղդին ժպիտը չէք ուզեր վայելել:

Վահան.— Զեր իշխանութիւնը անիրաւութեան վըրայ խարսուուած է: Դուք անխղճօրէն կ'օդտուիք ագէանձերու, ագէտ ժողովուրդներու անդիտակից վիճակէն և անոնց արդար իրաւունքը նենգութեամբ յափշտակելով՝ կը հարստանաք և այնպէս մը կը ձեւացնէք որ իրը թէ բարիք կ'ընէք: Դուք կողոպուտիւ աւաղակ Ոգին էք և ձեր ներկայութիւնը մեզի համար խորին անարդանք մըն է:

Ոգի.— Վայ ապերախտներ, փառքի զօրութեան դէմ՝ տկար ըմբռաներ...: Մնացէք ուրեմն շղթայակապ բանտերուն խորը:

Տիրան.— Պիտի կործանենք ձեր աիրապետութիւնը, Գիտաւորը պիտի դայ ու վերջ տայ Տգիտութեան այս համայնական անբարոյականութեան: Այս ատեն մեր գրէժը լուծուած պիտի ըլլայ, դարերու գրէժը...:

Աշոտ.— Մարդիկ իրարու ծառայել կրնան միայն, անոնք իրարմէ փառաւորուելու պէտք չունին, որովհետեւ հաւասարութեան սկզբունքը վսեմագոյն սկրդունքն է, փառքը և փառաւորութիւնը կը վայելեն անոնց՝ ուսնէք մարդկութեան թշուառութիւնը վերցնենոնց՝ ուսնէք մարդկութեան թշուառութիւնը կը կը լու համար կը գրեն, կը խօսին, կը գործեն, կը կը լու համար կը գրեն, կը խօսին, կը գործեն, արիւնը թափելով ուին և կը մեռնին իրենց մաքուր արիւնը թափելով Տգիտութեան բանտկներուն դէմ մղուած պատերազմներուն մէջ:

Ոգի.— Ապերախտներ... ապերախտներ, յիմար և ախտաւո՞ր ագերախտներ...: (Կը ներանայ: Դուրսան կը լսուի նետեւեալ բայլերգը:)

### Ք Ա Յ Լ Ե Բ Ի Գ

Տգիտութեան վարձկանները ծախեցին, Երկրագնդիս հարստութիւնն ահագին, Յանդգնեցան գերի վարել մարդ էակ, Մարկացնել մարդկութիւնը բավանդակ:

Վատ բռնութեան գործիքները անհամար:

Միշտ ճշեցին աշխատաւորը արդար:

Թշուառ մնաց երկրագործը ժրաշան,

Եւ սովամա: արուեստաւորն գիտութեան,

Ախ, բարբարոս բռնութեան դէմ՝ գրէժինդիր,

Պայքարեցէք և կուտեցէք անխտիր:

Դաշնակցեր են Փառքի , Թրամի Հեղտութեանց  
Դասակարգեր՝ կեղեքելու յաւիտեան ,  
Թշուառներու Ամբոխները դրկուած ,  
Նօթիներու Բազմութիւնը հալածուած :  
  
Դո՛ւք , որ անոնց սրբազան դատ պաշտպանէք ,  
Դո՛ւք , որ անոնց իրաւունքներն կը յարդէք ,  
Ուժով զարկէք Տգիտութեան ճիւտղին ,  
Եւ քանդեցէք բանտ ու պալատ աշխարհին  
Եւ հիմնեցէք Երջանկութեան սուրբ Երկիր ,  
Հաւասարութեան , Եղբայրութեան կարեկիր :

(Բանաւրիկեալիները յափօտակուած մըսիկ կ'ընեն, յեղափոխականները կը յարձակին բանակին վրայ, վասակներս կը մՏեն ռուարած, իւեն կը նետեին զօթեր, ռուժներ կ'ընեն ռուարած)

S U B L J.

## ՆՈՅՆԻ, ՎԱՍԻԿ, ԶԵՂԻՈՐԴԻԿ

Վասակ. — Խուժանը բանտին վրայ կը յարձակի, հիմա ներս պիտի թափացնէ և արիւնաւել կոխւը պիտիսկի, (պայքումներ, գոռում գոչում) ահա արտաքին գաւիթը գրաւուեցաւ: Քա՞զ եղիք, զինուաներ, եթէ կոռուելով մեռնինք՝ պատիւ պիտի վաստինք, իսկ եթէ փախչինք՝ թշնամիներէն պիտի զարնուինք վատաքար: Պատրաստ ամէնքդ ալ և առաջին նշանին կրակ . . . : (Աղմուկները կը տանան, Ֆետալիները ներս կը բափանցեն՝ գոչելով.)

S U P P L E M E N T

## ՀՐԱՄԱՆԱԳՐԸ

Ընկերներ, յառաջ խոյացէք, բանաը գրաւել պէտք  
է, գրաւել. Կրակ... (Հացանաձգութիւն, խնի մը  
զօրեր կ'ինան, վասակ անձնաւուր կ'ըլլայ մնացած  
զօրերով: Գոռում գոչում, փայլաւակում, շանք  
կ'արձակութիւն, երեք Ոդիները կրախով եւ շանքով ներ-  
կը մժնեն զայրացած, կը շամքահարեն Ֆեսախները ո-  
րացմէ մեծ մասը կը փախչի ահարեկած, Ոդիները կը  
գոչեն)

S U B L I M E .

ՀԱՅՆՔ ԵՒ ԱԳԻՆԵՐ

Մա՞ն... մա՞ն... թող այրէն և մոխի՛ր դառնան  
իմաստունները և գալափարականները... (վասակին եւ  
զօրքերուն) փոթորիկը անցաւ, զօրականներ, դուք որ  
միհչեւ հիմա հաւատաբարոքն ծառայեցիք, ձեզի պիտի  
վարձատրենք, մենք շանթահարեցինք թշնամիները և  
պատերազմը վերջացաւ: Տարի՛ք ուրեմն այս բանարա-  
կեալները անցուշ բերդը և հոն թող միհչեւ իրենց մա՞ր-  
ման չարաչար տանջանքներու մէջ... (զօրքերը կը բրո-  
նեն բանարկեալները)

**Հրանդ.** — Ժոլովորդին դա ար... որդեմուն  
Հաւասարութիւն և Ազատութիւն կը պահանջենք մենք...  
(պայթում, որում, փայլատակում, Գիսաւորը կ'երեւի)  
**Ա. Ա.** — Եղանձնն. — Գիսաւութը... Գիսաւութը...

Գիւաւորը . . . : Տիրան . — Հրատի բնակիչներուն միջացաւ է որ  
զի կուգայ Գիւաւորը :

**Ոգիները.** — Աճապարեցէ՞ք, շուտ, տարէ՞ք, ժառանակ չունինք այլ եւս աւելի սպասելու... պէտք է որ անպատճառ ներկայանանք Տգիտութեան մհծագոյն Ոգին... այս մենք կ'երթանք... (կը մեկնին)

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆՈՅՆՔ

**Վասոկ.** — Ախ, անիծուած Դիսաւորը... կը սարավիմ, կը սարսափիմ... (սարսափի եւ սոսկումի արտայայտութիւններ կ'առնեն ամենն ալ, գոռում, զում, փալլատակում կը շարունակուի): Բայց ո՛չ, պէտք քաջ ըլլալ, պատրանքներէ պէտք չէ ազդուիլ, Դիօրականներ, շուտով յառաջ վարեցէք այդ չարագործ-

**Հրանդ և ընկերները.** — Ահա մենք կ'երթանք բայց շուտով Դիսաւորը պիտի հասնի և մենք պիտի կրնանք մեր նպատակը իրազործուած տեսնել... անկցին բըռնականները, կործանին դաւաճանները... մա՞ս Տգիտեան ստրակներուն... (Վարագոյրը կ'իջնի)

ԱՐԱՐՈՒ Ա. Ձ. Դ.

**Վերլուծում.** — Տգիտութիւնն պատգամները, Տգիտութեան միջոցները, դասակարգերու ստրկական հըպատակութիւնն, գաղափարականներու դիւցազնական արիութիւնը, իմաստութեան ոգին յաւերժաւասներով հասնի՝ աշատոնակած Գիսաւորի մը վրայ, սոսկու կը և յափշտակութեան աւաւոր տեսարան: Իմաստութեան յաղթանակը, Կործանում Տգիտութեան տիրապետութեան և շանթաւարում չարագործ Ոգիններու, Ազատութեան և ներշնչութեան գաղափարականներու, Տառապանքի երկիրը կը հոչակուի երջանկութեան եր կիր: Կեանքի վայելքները ամենուն ալ հաւասարապէս:

ՏԵՍԻԼ Ա.

Տեսարանը կը ներկայացնի ընդարձակ դաշ մը կանանչաղորդ բլուրներով ծաղկաւաններով ու պլրականանչաղորդ բլուրներով: Կը խոխչեն գետակներ եւ առուակներ երգեցիկ բռչուներ, եւ անտարի կենդանիներ առդին երգեցիկ ծուռ կուզան անտառներու մէջ, հնոուեն կը անդին ծուռ կուզան անտառներու մէջ, հնոուեն կը նեմառուի ծովը եւ երկրի հնկայ զանգուածը անորու: Տգիտութեան բարձր բլուրի մը վրայ կը գտնուի Տգիտութեան ոգիին ոսկիէ զամբ գոհաւեններով ընդելուսուրեան ոգիին ոսկիէ զամբ կը գտնուին ֆիշ մը վար դրազուած անոր աչ կողմը կը գտնուին ֆիշ մը վար դրազուած անոր աչ կողմը կը գտնուին կնմերը իսկ ձախ կովմը կը գտնուին կնմալուրեան զամբը:

**Տգիտութեան Ոգի.** — (Ուկի մականը ձեռքը, իւ Վարագոյրը վազմած, մասյսն եւ յօգւուած: Վարագոյրին վրայ բազմած, մասյսն եւ յօգւուած: Վարագոյրը կը բացուի, զոռում, զոչում, փալլատակում, զոյրը կը բացուի, զոռում, զոչում, փալլատակումներ եւ ապա) Փայրում, լոյսի Փողփողումներ եւ ապա)

